# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻ 18 (1668) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 17, 2014
VOLUME 34, NO. 18 (1668) SATURDAY, MAY 17, 2014

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## «Եւրասիական Միութեան Սահմանը կ'անցնի Հայաստանի Ընդունուած Սահմաներով»

*Մայիս 14-ին Երեւանի, Մոսկուայի, Աստանայի եւ Մինսկի միջեւ լրագրողներու համար կազմակերպուած տեսակամուրջի ժամանակ ուշագրաւ յայտարարութիւն կատարեց Եւրասիական տնտեսական յանձնաժողովի Զարգացման բաժանմունքի Միջազգային գործակցութեան բաժինի պետ Անտոն Ազարով: Ան ըսաւ թէ, Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցելէն յետոյ, Միութեան ընդհանուր սահմանը կ'անցնի Հայաստանի Հանրապետութեան ընդունուած սահմաններով, իսկ Եւրասիական Միութեան Լեռնային Ղարաբաղի անդամակցութեան հարցը նոյնիսկ չի քննարկուիր:*

*Լրագրողները հարց տուին թէ, Եւրասիական Միութեան Հայաստանի անդամակցութենէն յետոյ ուրտե՞ղ պիտի անցնի միութեան ընդհանուր սահմանը եւ արդեօք Հայաստանի Հանրապետութեան ու Լեռնային Ղարաբաղի միջեւ մաքսակէտ պիտի ըլլա՞յ, թէ՞ Ղարաբաղը, փաստօրէն պիտի դառնայ Եւրասիական Միութեան անդամ:*

*«Պատասխանեմ միանշանակ. Մաքսային Միութեանը կամ մեր որեւէ միութեանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անդամակցութեան հարցն անգամ չի էլ քննարկւում, սահմանները անցնելու են Հայաստանի Հանրապետութեան ներկայումս ընդունուած սահմաններով», - ըսաւ Ազարովը:*

*Եւրասիական տնտեսական յանձնաժողովի պաշտօնեայի յայտարարութիւնը ուշագրաւ է այն առումով, որ Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչները բազմիցս յայտարարած են, որ Մաքսային Միութեան կամ Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցելէն յետոյ, Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ սահման պիտի չհաստատուի եւ մաքսակէտ պիտի չտեղադրուի եւ այդ հարցը լուծուած է:*

*Սակայն, լրատուամիջոցներու մէջ յայտնուած տեղեկութիւններու համաձայն, Ղազախստան եւ Պելառուս հակառակ են, որ Մաքսային Միութեան մէջ Հայաստանի հետ միասին յայտնուի նաեւ Լեռնային Ղարաբաղը: Այս կը նշանակէ, որ Միութեան անդամակցելէ յետոյ, Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ պէտք է մաքսակէտ տեղադրուի:*

*Տեսակամուրջէն յետոյ հայաստանցի լրագրողներու հետ զրոյցի ընթացքին, Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարեան, որ նոյնպէս կը մասնակցէր մամլո ասուլիսին, բացառեց, որ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ մաքսակէտ տեղադրուի:*

*«Ես կարծում եմ, որ այստեղ կայ որոշակի թիւրիմացութիւն լրագրողի հարցը ընկալելու առումով: Այնուամենայնիւ մի բան յստակ է, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ մաքսային սահման որեւէ պայմաններում գոյութիւն ունենալ չի կարող», - ըսաւ ան:*

## Առանց Ղարաբաղի Մասնակցութեան Անհնար է Առաջ Շարժիլ

*Առանց Լեռնային Ղարաբաղի ամբողջական ներգրաւուածութեան անկարելի է առաջ շարժիլ բանակցային գործընթացով, «Ազատութեան» ռատիոկայանին յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց փոխ-նախարար Շաւարշ Քոչարեան՝ անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքի հրապարակած եւ ղարաբաղեան բանակցութիւններու ընթացքին քննարկուող վեց հիմնական կէտերուն:*

*Ըստ փոխ-նախարարի, դեսպան Ուորլիք նոր բացայայտումներ չէ ըրած, նոյնը հրապարակած են նաեւ համանախագահ երկիրներու ղեկավարները:*

*Քոչարեան յայտնած է որ, դեսպանի յայտարարութիւնը պէտք է ընկալել որպէս բանակցային գործընթացը յառաջ շարժելու ցանկութիւն:*

*Ըստ Շաւարշ Քոչարեանի, յառաջընթացի համար կայ երկու հիմնական խոչընդոտ. «Առաջին՝ որպէսզի նման բարդ հարցերում հնարաւոր լինի փոխզիջումներով առաջ շարժուել, անհրաժեշտ է վստահութեան մթնոլորտ կողմերի միջեւ: Իսկ Ատրպէյճանի բոլոր քայլերը առայսօր ուղղուած են ոչ թէ վստահութեան մթնոլորտի ամրապնդմանը, այլ ճիշդ հակառակը: Եւ երկրորդ՝ Եւ երկրորդ՝ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան լիարժէք ներգրաւուածութեան բանակցային գործընթացին անհնարին է առաջ շարժուել: Հայաստանը մասնակցում է բանակցութիւններին, բայց երբեք իրենով չի կարող փոխարինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Եւ պատահական չէ, որ եթէ մենք ծանօթանանք այդ տարրերին, որոնք ժամանակին հրապարակուել էին, որոնք նորից յիշեցրեց Ուորլիքը, դրանց ճնշող մեծամասնութիւնը վերաբերում է հենց Լեռնային Ղարաբաղին»,- ըսած է Քոչարեան, աւելցնելով որ, եթէ այս երկու պայմանները չստեղծին, քիչ հաւանական է, որ ամերիկացի համանախագահի ցանկութիւնը իրականանայ:*

## Ֆրանսայի Նախագահի Օլանտի Պաշտօնական Այցը Հայաստան



**Ֆրանսուա Օլատ եւ Սերժ Սարգսեան Զուարթնոց օդակայանէն ներս տեղիունեցած ընդունման պաշտօնական արարողութեան ընթացքին**

*Պետական այցով առաջին անգամ ըլլալով, Մայիս 12-13 Հայաստան այցելեց Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ, որ այս առթիւ մասնակցեցաւ հայ-ֆրանսական տնտեսական փորումին, այցելեց Ծիծեռնակաբերդ, բացումը կատարեց Մանուշեանի անուան պուրակին եւ այցելեց ֆրանսական «Կարֆուր» ընկերութեան կողմէ կառուցուող հսկայ վաճառքի կեդրոնը:*

*Ֆրանսայի եւ Հայաստանի նախագահներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, որու ընթացքին Ֆրանսուա Օլանտ եւ Սերժ Սարգսեան անդրադարձան շարք մը կարեւոր հարցերու:*

*Անդրադառնալով Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրտողանի՝ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրուայ նախօրեակին տարածած յայտնի յայտարարութեան, Օլանտ ըսաւ թէ, ինք կը տեսնէ այդ յայտարարութեան դրական կողմերը, ամէն պարագային, իր համոզմամբ, այդ բաւարար չէ, եւ 1915 թուականին տեղի ունեցած ջարդերը պէտք է կոչուին ցեղասպանութիւն:*

*«Այն, ինչին պէտք է հասնիլ, ցեղասպանութեան ճանաչումն է»,- ըսաւ Օլանտ՝ շեշտելով, որ բոլորին յայտնի է իր կարծիքը Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ:*

*«Ֆիկարօ» թերթի թղթակիցը Խրիմի վերաբերող հարց ուղղեց Ֆրանսայի եւ Հայաստանի նախագահներուն, հետաքրքրուելով, թէ ինչո՞ւ Հայաստանը դարձաւ մէկը այն սակաւաթիւ երկիրներէն, որոնք ճանչցան Խրիմի միացումը Ռուսաստանին:*

*Նախագահ Օլանտ ըսաւ թէ ինք կը հասկնայ Հայաստանի դիրքորոշումը Խրիմի հարցով: «Իւրաքանչիւր ոք կը հասկանայ, որ այն կայացուած է որոշակի քաղաքական եւ աշխարհագրական համատեքստի մէջ, ինչ որ Հայաստանին մղեց պահպանել կապերը Ռուսաստանի հետ: Ես չեմ ուզեր դատել, իմ խնդիրը հասկնալն է»:*

*Իսկ Սերժ Սարգսեան ըսաւ, թէ գրեթէ 250 տարի Հայաստանը բարեկամութիւն կ'ընէ Ռուսաստանի հետ եւ ապա խօսեցաւ Մաքսային Միութեան միանալու եւ անկէ օգուտներու մասին:*

*«Ես կարծում եմ, որ որեւէ մէկի համար տարօրինակ չէր Հայաստանի ցանկութիւնը՝ անդամակցել Մաքսային Միութեանը, որովհետեւ իրօք տնտեսական փոխկապակցուածութիւնը այսօր շատ բարձր մակարդակի վրայ է: Բացի դրանից մենք ունենք Ռուսաստանի հետ երկկողմ բարեկամութեան պայմանագիր, մենք գտնւում ենք անվտանգութեան միեւնոյն համակարգում եւ գումարած դրան Մաքսային Միութիւնը որոշակի առաւելութիւններ է տալիս անդամ երկրներին, օրինակ, հնարաւորութիւն է տալիս Հայաստան ներկրելու մրցունակ գներով էներգակիրներ, ինչը հնարաւորութիւն է տալիս մեր սահմանափակ հնարաւորութիւնների պայմաններում ունենալ մրցունակ ապրանքներ: Սա է մեր որոշման շարժառիթը»,- ըսաւ Հայաստանի նախագահը:*

*Սերժ Սարգսեանը միեւնոյն ժամանակ յայտնեց, թէ անդամակցութիւնը Մաքսային Միութեան չի նշանակեր, որ կը դադրին կամ կը վերանան Եւրամիութեան հետ յարաբերութիւնները:*

*Միատեղ ասուլիսէն յետոյ Ֆրանսիայի եւ Հայաստանի նախագահները մասնակցեցան Ֆրանսայի ազգային հերոս, ֆաշիզմի դէմ դիմադրական շարժումի մասնակից Միսակ Մանուշեանի անուան պուրակի բացման արարողութեան, եւ ապա այցելեցին «Երեւան Մոլ» առեւտրային կենտրոնէն ներս յառաջիկային բացուելիք ֆրանսա-*

*Շար.ը էջ 4*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Վերջնագիր Հայաստանին

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները յայտարարութիւն են տարածել, որով փաստացի վերհաստատել կամ այսպէս ասած կոլեկտիւացրել են ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիքի օրերս արած յայտարարութիւնը, որտեղ նա խօսել էր Արցախի խնդրի կարգաւորման գործընթացում ամերիկեան քաղաքականութեան մասին ու ներկայացրել յայտնի վեց կէտերը՝ փաստացի Մադրիդեան սկզբունքները:*

*Այժմ, հայ հանրութիւնը, որ Ուորլիքին ենթարկել էր գրոհի, պէտք է երեւի թէ գրոհի նաեւ Ֆրանսային ու Ռուսաստանին, որովհետեւ նրանք էլ միացել ու կրկնում են Ուորլիքին:*

*Կարգաւորման մօտեցումը, որ առաջարկում է Մինսկի խումբը, փաստացի նոր չէ: Իսկ ահա թէ ինչու է խումբը նորից առաջարկում այդ մօտեցումները, հրապարակաւ, ընդգծուած, գրեթէ աննախադէպ բաց ու թափանցիկ կերպով, դա պէտք է մտահոգի հայ հանրութեանը:*

### Հայաստանի հանրութիւնը պէտք է զբաղուած լինի ոչ թէ առաջարկները բարձրաձայնող համանախագահներին գրոհելու, այլ հասկանալու գործով

*Հայաստանի հանրութիւնը պէտք է զբաղուած լինի ոչ թէ առաջարկները բարձրաձայնող համանախագահներին գրոհելու, այլ հասկանալու գործով՝ թէ ինչու հիմա, ինչու նախ ամերիկացի համանախագահը, յետոյ Մինսկի խումբն ընդհանուր:*

*ԵԱՀԿ Մինսկի խմբում սկսել է մրցակցութիւն Արցախի հարցի «Թուրք-ատրպէյճանանպաստ» կարգաւորման համար: Թուրք-ատրպէյճանանպաստն ի հարկէ պայմանական հասկացութիւն է: Խնդիրն ըստ ամենայնի այլ է: Հայաստանը հրադադրից յետոյ մօտ երկու տասնամեակի ընթացքում ցոյց տուեց, իսկ վերջում պարզապէս չափազանց ակնառու եւ վերջնական ձեւով, որ ի վիճակի չէ տարածաշրջանում լինել լուրջ քաղաքական նախագծերի պատասխանատու մասնակից:*

*Մոսկուայի խնդիրն է տարածաշրջանից դուրս մղել Կովկասում քայլ առ քայլ ներկայութիւնն ամրապնդող Միացեալ Նահանգներին: Այդ գործում Ռուսաստանը մտադիր է ներգրաւել Թուրքիան ու Ատրպէյճանը, իսկ նրանց էլ գայթակղել Հայաստանով ու Արցախով: Այդ նպատակի համար պէտք էր Հայաստանը լիակատար զրկել դիմադրութեան ռեսուրսից, ինչը ռուսներն անում են բաւական ակտիւ:*

*ԱՄՆ երկար տարիներ Ռուսաստանի այդ ջանքին հակադրում էր ստատուս-քուոն պահպանելու ջանքը: Ուաշինկթոնի համար ստատուս-քուոյի փոփոխութեան պարագայում ուժեղանում է ոչ միայն Ռուսաստանը, այլ նաեւ Թուրք-ատրպէյճանական տանդեմը, որը խիստ անցանկալի է ու անվստահելի:*

*Բայց, Հայաստանն իր վերջին շրջանի գործողութիւններով դարձել է էլ աւելի անվստահելի եւ վտանգաւոր, որովհետեւ Հայաստանը ոչ միայն ցոյց է տուել որեւէ լուրջ քաղաքական նախագծման գործընկեր լինելու անկարողութիւնը, այլ նաեւ վերածուել է Ռուսաստանի ձեռքին բութ գործիքի:*

*Այդ պայմաններում, Ուաշինկթոնին մնում է երկու տարբերակ՝ կամ արթնացնել Հայաստանում հանրութեանը եւ վերականգնել Հայաստանի քաղաքական գործընկերութեան ներուժը, կամ անմիջականօրէն ներգրաւուել ստատուս-քուոն վերաձեւելու Ռուսաստանի թելադրած գործընթացի մէջ եւ փորձել ինչպէս Մոսկուայի այլ ռեգիոնալ նախաձեռնութիւններում, այդ դէպքում էլ նախաձեռնութիւնը վերցնել սեփական ձեռքը՝ տապալել չստացուելու պարագայում գոնէ այն իրականացնող առաջնորդի կարգավիճակ ունենալու համար:*

*ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահի յայտարարութիւնն ուղղուած էր այդ երկու նպատակներին՝ Հայաստանի հանրութեանն արթնացնելու փորձ անել՝ Արցախի խնդրով, եւ միեւնոյն ժամանակ վերցնել ստատուս-քուոն Ատրպէյճանի ու Թուրքիայի հետ վերաբաժանելու Մոսկուայի նախաձեռնութիւնը:*

*Մինսկի խմբի յայտարարութիւնը վկայում է, որ Ռուսաստանն ընդունում է բաց կամ համեմատաբար աւելի բաց խաղի ԱՄՆ նախաձեռնութիւնը: Կարծես թէ համանախագահները պայմանաւորւում են մի բանում՝ թաքցնելու բան այլեւս չկայ: Դա նշանակում է, որ առաջիկայում գործընթացները կարող են կրել առաւել դաժան բնոյթ, քանի որ մեծանում է վտանգի՝ տեսարաններով ուղեկցուելու հաւանականութիւնը:*

*Հայաստանի հանրութիւնը Ուորլիքի յայտարարութիւնից յետոյ տաք-տաք քննարկում էր վտանգն ու մարտահրաւէրները, բայց դրանք ընդհատուեցին Եւրատեսիլի ռազմավարական քննարկումներով: Հայաստանի հանրութիւնը չնկատեց անգամ բանակում տեղի ունեցած հերթական մահուան դէպքը՝ Ուորլիքի եւ Մինսկի խմբի յայտարարութիւնների արանքում, Յաղթանակի յետտօնական առաջին լուսաբացին:*

*Մինսկի խումբը իրականում յայտարարութիւն է անում Ատրպէյճանի ու Թուրքիայի համար: Հայաստանի համար դա վերջնագիր է, սեփական յաղթանակը տնօրինելու սպառնող հնարաւորութեան մասին:*

*«ԼՐԱԳԻՐ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Մի՛ Հայհոյէք Դեսպաններին

*Արդէն մի քանի օր Հայաստանում դեսպաններ հայհոյելու գործընթաց է սկսուել: Առիթը ՀՀ-ում ՌԴ եւ ԱՄՆ դեսպանների՝ վերջին օրերին արած յայտարարութիւններն են:*

*ՌԴ դեսպան Վոլինկինն ասել էր, թէ հարկաւոր է Հայաստանում այլ մեթոդներով պայքարել հայ-ռուսական յարաբերութիւնների մէջ սեպ խրելու նպատակ ունեցող հասարակական կազմակերպութիւնների դէմ, իսկ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը վերահաստատել էր ԵԱՀԿ Մխ ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիքի յայտարարութիւնը, թէ Ղարաբաղի շրջակայ տարածքները պէտք է վերադարձուեն Ատրպէյճանին:*

*Դեսպաններին հայհոյողները, զարմանալի զուգադիպութեամբ, յստակ երկու խմբի են բաժանւում: Առաջին խումբը հայհոյում է ՀՀ-ում ՌԴ դեսպանին եւ ոչինչ չի ասում ԱՄՆ դեսպանի մասին, իսկ երկրորդ մասը հայհոյում է ԱՄՆ դեսպանին եւ ոչինչ չի ասում Ռուսաստանի դեսպանի մասին:*

### Ռուսաստանի դեսպանին հայհոյողների մէջ քիչ չեն նրանք, ովքեր ոչ մի պարագայում չեն քննադատի ԱՄՆ դեսպանին, ինչ էլ նա ասի, իսկ ԱՄՆ դեսպանին հայհոյողների մէջ քիչ չեն նրանք, ովքեր որեւէ դէպքում քննադատական ծպտուն չեն հանի ՌԴ դեսպանի հասցէին

*Տպաւորութիւնն այնպիսին է, որ Ռուսաստանի դեսպանին հայհոյողների մէջ քիչ չեն նրանք, ովքեր ոչ մի պարագայում չեն քննադատի ԱՄՆ դեսպանին, ինչ էլ նա ասի, իսկ ԱՄՆ դեսպանին հայհոյողների մէջ քիչ չեն նրանք, ովքեր որեւէ դէպքում քննադատական ծպտուն չեն հանի ՌԴ դեսպանի հասցէին, ինչ էլ նա ասած լինի: Սա վատ է նրանով, որ մեր հանրութեանը բաժանում է ամերիկամէտների եւ ռուսամէտների, կամ տուեալ դէպքում՝ ճիշտ կը լինի ասել ամերիկահպատակների եւ ռուսահպատակների: Եւ ըստ էութեան, այս եւ այսօրինակ իրավիճակներն ակնյայտ են դարձնում հայկական ասելիքի չձեւաւորուած լինելը՝ առնուազն արտաքին աշխարհի հետ յարաբերութիւններում: Հայ-ռուսական յարաբերութիւնների մասին Հայաստանում երկու պատկերացում կայ. առաջինի համաձայն՝ մենք պէտք է պառկենք Ռուսաստանի տակ, իսկ երկրորդի համաձայն՝ կռիւ տանք Ռուսաստանի դէմ: Երկու տեսակէտներն էլ հաւասարապէս վտանգաւոր են, որովհետեւ երկուսն էլ խորքում կրում են հակապետական տրամաբանութիւն: Առաջին դէպքում պետականութեան անկումը ենթադրւում է Ռուսաստանի մէջ ներծծուելու, երկրորդ դէպքում՝ Ռուսաստանի դրբի տակ մնալու տարբերակով: Իսկ արդիւնքը, մեծ հաշուով, նոյնն է: Ընդ որում, Ռուսաստանը առաջին տարբերակի կողմնակիցներին չի ուզում լսել, որովհետեւ նրանց համարում է սեփական փալասը, իսկ երկրորդ տարբերակի կողմնակիցներին չի ուզում լսել, որովհետեւ նրանց համարում է ամերիկեան շպիոն ու թշնամի: Այսօրինակ իրարանցումները կանխելու համար պէտք է ոչ թէ հայհոյել ՀՀ-ում ՌԴ դեսպանին, այլ յստակ եւ հասկանալի ձեւակերպել, թէ ինչ ենք մենք ակնկալում հայ-ռուսական յարաբերութիւններից, որն է այդ յարաբերութիւնների մասին մեր այլընտրանքային պատկերացումը, որ տարբերւում է թէ՝ պրոռուսական եւ թէ՝ պրոամերիկեան սցենարից:*

*Նոյնը վերաբերւում է Ղարաբաղի հարցին: Ոչ թէ պէտք է հայհոյել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին, այլ պէտք է ԼՂ հարցի կարգաւորման՝ միջազգային հանրութեան համար ընկալելի հայկական այլընտրանք առաջարկել: Դեռ բաւարար չէ ասել, որ մեզ համար անընդունելի է ԼՂ հարցի կարգաւորման այս կամ այն սցենարը: Հարկաւոր է միջազգային հանրութեան համար հասկանալի կերպով բացատրել, թէ որն է կարգաւորման՝ մեզ համար ընդունելի սցենարը: Ընդ որում, դա պէտք է լինի մի այնպիսի սցենար, որ աշխարհի համար չհնչի որպէս ազգայնական ֆանատիզմի դրսեւորում: Դեսպաններին հայհոյելը արդիւնաւէտ զբաղմունք չէ, մի՛ հայհոյէք դեսպաններին, որովհետեւ դա մեր պրոբլեմները չհասկանալու նոր հարթակ է դառնում մեզ համար: Ինչ ուզում է ասեն դեսպանները, նրանց ասածի ամենամեծ պրոբլեմն այն է, որ մենք չունենք սեփական ասելիք:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Լ. Տէր-Պետրոսեան. «Ինչքան Բարեփոխում են, Այնքան Երկիրը Կործանւում է»

*Ինչքան բարեփոխում են, այնքան երկիրը կործանւում է, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարել է Հայաստանի առաջին նախագահ, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) կուսակցութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:*

*Առաջին նախագահը եկել էր ՀԱԿ-ի երիտասարդական կոնգրէսի համագումարին: Տէր-Պետրոսեանի այցն անակնկալ էր երիտասարդների համար: Բուռն ծափողջոյններից, «Լեւոն, Լեւոն» բացականչութիւններից յետոյ համագումարն ընդմիջուեց, իսկ յետոյ այն անցաւ դռնփակ՝ առանց լրատուամիջոցների մասնակցութեան:*

*Թէպէտ լրագրողները փորձեցին առաջին նախագահի կարծիքը լսել ներքաղաքական մի շարք հարցերի վերաբերեալ, Տէր-Պետրոսեանն ասաց, որ գնահատականներ այսօր չի տալու: Այնուամենայնիւ, «Ազատութեանը» յաջողուեց մի քանի հարց ուղղել առաջին նախագահին:*

*Քանի որ այսօր նա եկել էր քաջալերելու հենց երիտասարդներին, Տէր-Պետրոսեանին խնդրեցինք կարծիք յայտնել պարտադիր կուտակայինի դէմ փողոց դուրս եկած երիտասարդների մասին:*

*«Ես ողջունում եմ այդ պահանջը», - արձագանքեց առաջին նախագահը:*

*Միաժամանակ, Տէր-Պետրոսեանը համաձայն չէ, թէ այսօր կառավարութիւնը այնպիսի ճգնաժամում է յայտնուել, որ հենց քաղաքացիների նախաձեռնութիւնն է հարցին լուծում տալու: «Դա ընդամէնը մի տարր է, որը անհրաժեշտ տարր է, իսկ հիմնականը քաղաքական ուժերը պիտի լուծեն այդ [խնդիրը]», - ասաց նա:*

*Հարցին էլ՝ կարո՞ղ է ինչ-որ արդիւնքի հասնել քաղաքացիական նախաձեռնութիւնը հանրային ճնշմամբ, առաջին նախագահը պատասխանեց. - «Առանց քաղաքական ուժերի աջակցութեան ոչ մի բանի չի կարող հասնել, քաղաքական ուժերն էլ առանց այս քաղաքացիական շարժումների աջակցութեան ոչ մի յաջողութեան չեն կարող հասնել»:*

*«Իմ խնդիրը համակարգն է՝ ուրիշ խնդիր ես չունեմ: Ցանկացած էդպիսի հարց, որ բարձրացնում են, իհարկէ, ողջունելի է: Եթէ դրանք շատանան, բազմազան դառնան, աւելի զանգուածային դառնան, դա կը նպաստի հենց համակարգային փոփոխութիւններին», - շարունակեց առաջին նախագահը:*

*Ի պատասխան մէկ այլ հարցի՝ Տէր-Պետրոսեանը չցանկացաւ տարանջատել ներքին եւ արտաքին խնդիրները եւ ընդգծեց, որ այդպիսի բաժանում «ընդհանրապէս չգիտի»: «Կայ պետութիւն՝ ներքին ու արտաքին միաձոյլ խնդիրների մի համակարգ», - ասաց առաջին նախագահը՝ համոզմունք յայտնելով, որ երկրում առկայ բոլոր խնդիրներին պէտք է տրուի համակարգային լուծում:*

*Տէր-Պետրոսեանը հրաժարուեց ներկայացնել իր վերաբերմունքը ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջէյմս Ուորլիքի՝ ղարաբաղեան գործընթացի վերաբերեալ վերջերս արած յայտարարութիւններին:*

*Սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ իր կարծիքը յայտնելով՝ առաջին նախագահը յայտարարեց, որ այս իշխանութիւնների նախաձեռնած ոչ մի բարեփոխման չի հաւատում. - «Ինչքան բարեփոխում են, այդքան այս երկիրը կործանւում է: Կործանւում է: Նրանց բոլոր բարեփոխումներ, այսպէս կոչուած, չակերտաւոր, կոչուածները ուղղուած են այս երկիրը կործանելուն»:*

## Ֆինանսների Նախկին Նախարարը Մեծ Գումարներ է Փոխանցել Կիպրոս

*Ֆինանսների արդէն նախկին նախարար Դաւիթ Սարգսեանը հերքում է տեղեկութիւնները, թէ ինքը մեծ գումարներ է փոխանցել Կիպրոս: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նա նշեց, որ ծանօթ է Վերահսկիչ Պալատի հաշուետուութեանը եւ այնտեղ իր կողմից՝ Կիպրոս մեծ գումարներ փոխանցելու մասին որեւէ բան չկայ: «Ծանօթ եմ հաշուետուութեանը, այդտեղ այդպիսի բաներ չկան, երբ ծանօթանաք, կը տեսնենք, ես անձամբ ոչ մի գումար ոչ մի տեղ չեմ փոխանցել»,- ասաց նախկին նախարարը:*

*Նախկին նախարարը պարզաբանեց, որ Կիպրոսում գրանցուած «Four Assist Development Consulting Limited» ընկերութեան հետ պայմանագիրը կնքուել է 2012թ Յունիսին եւ անգամ ամենամեծ ցանկութեան դէպքում ինքը չէր կարող Կիպրոս գումար փոխանցել, քանի որ ֆինանսների նախարար չէր:*

*«Աւելին, ինչքան որ յիշում եմ, մինչ այդ պայմանագրի կնքուել մրցոյթ է եղել, որը կազմակերպուել է դրանից աւելի շուտ՝ 2011թ: Եւ յետոյ՝ Վերահսկիչ Պալատի այս հաշուետուութեան հետ կապուած ՖԻԳ-ը բովանդակային պարզաբանումներ էր տուել եւ համապատասխան արձագանք էր եղել»,- ասաց նախկին նախարարը:*

*Դաւիթ Սարգսեանը յաւելեալ պարզաբանման համար խորհուրդ տուեց դիմել համապատասխան ծառայութիւններին՝ Վերահսկիչ Պալատին կամ Ֆինանսների նախարարութեանը:*

*Նշենք, որ Վերահսկիչ Պալատն իր հերթական հաշուետուութեան մէջ անդրադարձել է Ֆինանսների արդէն նախկին նախարար Դաւիթ Սարգսեանին. պարզւում է, որ միջազգային ֆինանսական կազմակերպութիւնների կողմից Հայաստանին տրուած դրամաշնորհների գումարները փոխանցուել են Կիպրոսում գրանցուած ինչ-որ կազմակերպութիւնների հաշուեհամարներին, որոնց հետ կառավարութիւնը՝ ի դէմս Ֆինանսների նախարարութեան, կնքել է ծրագրի կատարման պայմանագիր: Վերահսկիչ պալատի տուեալներով՝ ծրագիրը կատարել է հայաստանեան ինչ-որ երրորդ ընկերութիւն:*

*ՎՊ-ն իր հաշուետուութեան մէջ գրում է, որ «Բնական հարց է առաջանում, եթէ հայկական որեւէ ընկերութիւն կարող է կատարել աշխատանքները 288 հազար ԱՄՆ դոլարով, ապա ինչո՞ւ է այն իրականացւում կիպրոսեան ընկերութեան կողմից՝ 704 100 ԱՄՆ դոլար արժէքով»:*

*Մեր կառավարութիւնը պայմանագիր է կնքել Կիպրոսում գրանցուած «Four Assist Development Consulting Limited» ընկերութեան հետ եւ փոխանցել է 704.000 ԱՄՆ դոլար: Կիպրոսեան ընկերութիւնն իր հերթին պայմանագրի կնքման նոյն օրը 288.000 ԱՄՆ դոլար արժէքով ենթամատակարարի պայմանագիր է կնքել ՀՀ-ում գրանցուած «Փի-էյՋ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի հետ, որն էլ իրականացրել է նախատեսուած աշխատանքների ողջ ծաւալը:*

## ՍԴՀԿ-ում Ընդունել են Պոլիսի Նոր Զարթօնք հայկական միութեան ներկայացուցիչներին



*Պոլսահայ Նոր Զարթօնք կազմակերպութեան ներկայացուցիչները ՍԴՀԿ Երեւանի կեդրոնէն ներս*

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ Գէորգ Պերկուպերկեանն ու Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանը Երեւանի «Ստեփան Սապահ-Գիւլեան» կենտրոնում ընդունեցին Կ. Պոլիսի «Նոր Զարթօնք» հայկական միութեան ներկայացուցիչներ Ալեքսիս Քալքին եւ Նշան Գիւրճին: Հանդիպման ընթացքում քննարկուեց Պոլսի հայ համայնքի վիճակը, Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Թուրքիա պետութեան ժխտողական վերաբերմունքը, Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան մարտավարութիւնն ու Պոլսի հայ համայնքի կողմից պահանջատիրական հարցեր բարձրացնելու խնդիրները:*

*ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանը կուսակցութեան անունից խոր վրդովմունք յայտնեց Հայ Առաքելական Եկեղեցու Պոլսոյ պատրիարքական փոխանորդ Արամ Աթէշեանի՝Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ հանդիպելուց անմիջապէս յետոյ հնչեցրած յայտարարութեան կապակցութեամբ: Իր հերթին Ալեքսիս Քալքը նշեց, որ նման հարցերում Աթէշեանի յայտարարութիւնները երբեք չպէտք է ընկալել իբրեւ Պոլսի հայ համայնքի ամբողջական կարծիք, աւելին, վերջինս իրաւունք չունի հայ համայնքի անունից հանդէս գալ:*

## Հայ Տնտեսագէտ.-«Օլիգարխներին Թոյլ են Տուել Փողով Օրինականացնել Իրենց Գողացած Հարստութիւնը»

*Հայաստանի օլիգարխներին թոյլ են տուել գումար վճարել եւ իրենց գողացած հարստութիւնն օրինականացնել: Այս մասին, Մայիսի 14-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանի գործատուների միութեան նախագահ Գագիկ Մակարեանը՝ մեկնաբանելով «Այլընտրանքային հարկային ստուգումների մասին» օրինագիծը:*

*Օրինագծի ընդունման իմաստն այն է, որ օլիգարխները կամ խոշոր գործարարները իրենց փողերն օրինականացնելու անհրաժեշտութիւն զգան: Պատճառներն այստեղ երկուսն են. Նախ գալիս է բիզնէսն ու փողերը ժառանգաբար փոխանցելու ժամանակը: «Քանի որ հայերը մտահոգւում են իրենց երեխաների մասին, նրանք չեն ուզում, որ իրենց ժառանգորդները խնդիրների առջեւ կանգնեն»,- յայտարարել է Մակարեանը: Երկրորդ պատճառը բիզնեսի համար օտարերկրեայ ֆինանսաւորում ներգրաւելն է: Առանց օրինական կապիտալի դա խնդրայարոյց է:*

*«Դրա համար էլ մշակուել է վճարովի հարկային ստուգումների մասին օրինագիծը՝ առանց պատժամիջոցների կիրառման: Պարզ ասած, դու գումար ես վճարում, եւ քո գողացած փողերը դառնում են օրինական: Կապիտալի օրինականացումը տեղի է ունեցել, օրինակ հարեւան Վրաստանում, որտեղ հարկային համաներում է կատարուել: Մեզ մօտ անհրաժեշտ է թափանցիկութիւն, հասարակութիւնը պէտք է իմանայ, թէ հարկային ծառայութիւնն ում մօտ եւ ինչ գումարի սխալներ է գտել հարկային հաշուետուութիւններում»,-ընդգծել է Մակարեանը:*



*Հայաստանի գործատուների միութեան նախագահ Գագիկ Մակարեան*

**ԼՈՒՐԵՐ**

## Հայոց Ցեղասպանութեան Հարցով Քննարկում Իսրայէլի Քնեսեթում

*Իսրայէլի Քնեսեթը Մայիս 13-ին յատուկ լիագումար նիստ է անցկացրել՝ քննարկելու Հայոց ցեղասպանութեան թեման, փոխանցում է իսրայէլական խորհրդարանի պաշտօնական կայքէջը:*

*Հարցը օրակարգ էր ներկայացրել «Մերեց» կուսակցութեան պատգամաւոր Զահաւա Գալ-Օնը՝ կոչ անելով երկրի կառավարութեանը ճանաչել Օսմանեան Թուրքիայում Հայոց ցեղասպանութիւնը մինչեւ այդ ողբերգական իրադարձութիւնների 100-ամեայ տարելիցը:*

*Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն՝ քննարկումների ժամանակ իր ելոյթում Քնեսեթի խօսնակ Եուլի-Եոել Էդելշտեյնը յայտնել է, որ որպէս նախարար պաշտօնավարելիս ծաղկեպսակ է դրել Հայոց ցեղասպանութեան զոհերի Ծիծեռնակաբերդի յուշարձանին: Նա արտայայտել է իր դիրքորոշումը, ըստ որի՝ «անհրաժեշտ է յիշել հայ ժողովրդի կոտորածը»:*

*Քնեսեթի այս քննարկումները «չեն մեղադրում ժամանակակից որեւէ երկրի, այլ աւելի շուտ ցոյց են տալիս, որ մենք մեզ նոյնականացնում ենք կոտորածի զոհերի հետ եւ գիտակցում ենք դրա ահաւոր հետեւանքները», յայտարարել է Էդելշտեյնը՝ շարունակելով. - «Մենք գործում ենք որպէս հրեաներ եւ հաւատարիմ ենք ճշմարտութեանն ու այլ ժողովրդի տառապանքներին: Մենք չենք կարող հերքել պատմութիւնը եւ անտեսել մարդկային արժէքները դիւանագիտական եւ քաղաքական զգուշութիւնից ելնելով»:*

*Նախաձեռնութեան հեղինակ Զահաւա Գալ-Օնը յայտարարել է, որ «ժամանակն է, որպէսզի Իսրայէլի կառավարութիւնը ճանաչի հայ ժողովրդի կոտորածը»: Նա յաւելել է, որ նման ճանաչումը Իսրայէլի համար շատ կարեւոր երկիր Թուրքիայի հետ յարաբերութիւնները փչացնելու փորձ չէ:*

*«Կառավարութիւնը չպէտք է զոհաբերի ճանաչումը յանուն ժամանակաւոր շահերի», - ընդգծել է «Մերեց» կուսակցութեան առաջնորդը՝ մանրամասնելով. - «Դիւանագիտական իրավիճակը միշտ տարբեր է: Երբ մենք Թուրքիայի հետ յարաբերութիւնների կողմնակիցն ենք, չենք ճանաչում ցեղասպանութիւնը, եւ ահա՝ «Մարմարա»-ն (2010 թուականին Գազայի հատուած ուղեւորուող «Մաւի Մարմարա» նաւի հետ կապուած իրադարձութիւնները), եւ մենք մտափոխւում ենք»:*

*«Որպէս Հոլոքոսթը վերապրած ազգ՝ մենք չենք կարող շարունակել Հայոց ցեղասպանութեան անտեսումը», - ասել է Գալ- Օնը:*

*Հայոց ցեղասպանութեան ճանաչման օգտին է հանդէս եկել նաեւ «Լիկուդ-Իսրայէլ Բեյթենու» խմբակցութիւնից Ռոյվէն Ռիվլինը, նշելով, մասնաւորապէս, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը իրենց՝ որպէս հրեաների, բարոյական պարտաւորութիւնն է: «Ինձ համար ծանր է ներել այլ ազգերին մեր ողբերգութիւնը անտեսելու համար, եւ մենք չենք կարող անտեսել այլ ազգի ողբերգութիւնը», - մասնաւորապէս, շեշտել է նա:*

*Իսրայէլի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի անունից հանդէս է եկել զբօսաշրջութեան նախարար, «Լիկուդ-Իսրայէլ Բեյթենու» խմբակցութեան պատգամաւոր Եուզի Լանդաուն, ով ասել է, մասնաւորապէս, թէ իրենք՝ որպէս հրեաներ եւ իսրայէլցիներ, «նոյնիսկ բարոյական պարտաւորութիւն ունեն ճանաչելու մարդկային ողբերգութիւնները, այդ թւում՝ Հայոց ցեղասպանութիւնը»:*

*«Իսրայէլի պետութիւնը երբեք չի հերքել տեղի ունեցածը», - վստահեցրել է նախարարը՝ միաժամանակ նշելով, թէ վերջին տարիներին այս թեման վերածուել է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ քաղաքական հարցի, եւ «կողմերից իւրաքանչիւրը փորձում է ապացուցել, որ ինքն է ճիշդ»:*

*«Յուսով ենք, որ երկու երկրները կ'իրագործեն մի քանի տարի առաջ իրենց ստորագրած համաձայնութիւնը եւ կը շարունակեն բաց, խորը երկխօսութիւնը, որը նրանց թոյլ կը տայ բժշկել տասնամեակներով բաց մնացած վէրքերը», - յայտարարել է Լանդաուն:*

## Կիպրոսի Թուրքական Հատուածի Հայկական Եկեղեցում Ժամերգութիւն Է Անցկացուել

*Վերջին յիսուն տարում առաջին անգամ Կիպրոսի թուրքական հատուածի հայկական եկեղեցում ժամերգութիւն է անցկացուել:*

*Կիրակի, Մայիս 11 օրը Կիպրոսի երկու հատուածներում բնակուող հայ համայնքի մօտ 500 ներկայացուցիչներ հաւաքուել են Լեֆկոսա քաղաքի հայկական եկեղեցում եւ մասնակցել ժամերգութեանը:*

*Եկեղեցական արարողութեանը մասնակցել են նաեւ Կիպրոսում ՄԱԿ-ի յատուկ ներկայացուցիչ Լիզա Բատենհեյմը, մի քանի դիւանագէտներ եւ Հալա Սուլթան Մզկիթի իմամ Սեւքեթ Ալեմդարը:*

*«Անադոլու»-ի թղթակցի հետ զրոյցում պատարագի մասնակիցներից Զորա Թերզեանն ասել է, որ աւարտել է այդ եկեղեցուն կից դպրոցը եւ սա իր տունն է համարում: Նա յոյս է յայտնել, որ նման քայլերը կարող են աջակցել կիսուած կղզում խաղաղութեան գործընթացին:*

*Ժամերգութեան մասնակիցներից Գուլա Կասաբեանն էլ ասում է, որ յիսուն տարուայ ընդմիջումից յետոյ եկեղեցում արարողութիւն անցկացնելը վկայում է, որ հնարաւոր է խնդիրները կարգաւորել կղզու երկու կողմերի միջեւ:*

*Կիպրոս կղզին բաժանուած է յունական եւ թուրքական մասերի 1974 թուականից ի վեր:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

## Նիկոլ Փաշինեան. Հայաստանը Ոչ Մի Դէպքում Չպէտք Է Համաձայնի «Անվտանգութիւն Ինքնիշխանութեան Դիմաց» Բանաձեւին



ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

*Ռուսաստանը Հայաստանի անվտանգութեան կարեւորագոյն երաշխիքներից մէկն է, բայց անհրաժեշտ է յստակ ձեւակերպել, որ երկրի անվտանգութեան տակ ենթադրւում է նաեւ ինքնիշխանութիւնը: Այս մասին Մայիսի 14-ին Ուկրաինայի շուրջ վերջին գործընթացների եւ Հայաստանի՝ ՄՄ-ին անդամակցման մասին որոշման ընդլայնուած համատեքստում «Հայաստանը աշխարհաքաղաքական խաչմերուկում. այլընտրանքների ուսումնասիրութիւն» վերտառութեամբ քննարկումների ընթացքում յայտարարել է ՀԱԿ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:*

*Նրա համոզմամբ՝ հայ-ռուսական յարաբերութիւնների օրակարգը լրացման եւ վերանայման կարիք ունի: «Հայ-ռուսական յարաբերութիւնների ամենակարեւոր խնդիրն այն է, որ երկխօսութիւնն ու քննարկումները գտնւում են բաւական ցածր մակարդակի վրայ: Այդ տեսանկիւնից պէտք է հայ-ռուսական երկխօսութեան նոր օրակարգ ձեւաւորել: Մենք ոչ մի դէպքում չպէտք է համաձայնինք «անվտանգութիւն ինքնիշխանութեան դիմաց» բանաձեւին»,-ընդգծել է Փաշինեանը՝ յաւելելով, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջին նպատակը պէտք է լինի երկրի ինքնիշխանութեան պաշտպանութիւնը»:*

## Հայաստանը Չորրորդ Տեղը Գրաւեց «Եւրատեսիլ - 2014»-Ում




Երգիչ Արամ MP3 ելոյթ կ'ունենայ «Եւրատեսիլ – 2014»-ի ընթացքին

*Հայաստանը ներկայացնող Արամ MP3-ը Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում անցկացուած «Եւրատեսիլ - 2014»-ում գրաւեց չորրորդ տեղը՝ կրկնելով երկրի առայժմ ամենամեծ յաջողութիւնը երգի այս մրցոյթում:*

*Մրցոյթի եզրափակիչին յաջորդած քուէարկութեան արդիւնքում Հայաստանի ներկայացուցիչը առաւելագոյն՝ 12 միաւոր ստացաւ երեք երկրներում՝ Ֆրանսիայում, Աւստրիայում եւ Վրաստանում, եւս չորս երկրներում՝ Բելգիայում, Ռուսաստանում, Յունաստանում եւ Իսրայէլում, առաջինն էր հեռուստադիտողների sms-քուէարկութիւնների արդիւնքներով, որոնք, սակայն, ժիւրիները նուազեցրել էին, ընդ որում՝ Բելգիայում Հայաստանին ընդհանրապէս միաւոր չտուեց:*

*«Եւրատեսիլ - 2014»-ին Արամ MP3-ը մասնակցում էր իր իսկ Not Alone երգով, որի բառերի հեղինակը Գարիկ Պապոյեանն է:*

*Երգի մրցոյթում յաղթեց Աւստրիան ներկայացնող Կոնչիտա Վիւրստը՝ Rise Like a Phoenix երգով:*

*Հայաստանը չորրորդ տեղն էր գրաւել նաեւ «Եւրատեսիլ - 2008»-ում, երբ երկիրը ներկայացնում էր Սիրուշոն՝ «Քելէ, քելէ» երգով:*

*Հայաստանը «Եւրատեսիլ» երգի մրցոյթին մասնակցում է 2006 թուականից:*

## Ֆրանսայի Նախագահ Օլանտ

Շարունակուած էջ 1-էն

*կան «Կարֆուր» ընկերութեան կողմէ կառուցուող հսկայ վաճառքի խանութի վայրը:*

*Ի պատիւ Ֆրանսայի նախագահին տրուած ճաշկերոյթի ընթացքին ելոյթ ունենալով Սերժ Սարգսեան ողջունեց Ֆրանսայի կողմէ Հայաստանի մէջ կատարուած աւելի քան 1 միլիար տոլարի հասնող ընդհանուր ներդրումները եւ մօտ 180 ֆրանսական ընկերութիւններու ներգրաւուածութիւնը Հայաստանի տնտեսութեան մէջ, որոնց շարքին են «Պեռնօ Ռիկար»-ը, «Օրանժ»-ը, «Կրետիդ Ագրիկոլ»-ը, «Վեոլիա»-ն, «Սոր»-ը, «Ալկատել»-ը, որոնց կը միանայ նաեւ «Կարֆուր»-ը:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
## ԼԻԲԱՆԱՆԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ ՃԱՅՐՈՅԹԻ ՕՐ



Աշխատաւորական սենդիքաներու աշխատանքները համակարգող խորհուրդը խորհրդարանի նիստին զուգահեռ նստացոյց մը կազմակերպեց Կեդրոնական Պէյրութի Ռիատ Սոլհի հրապարակին վրայ: Հրապարակային նստացոյցին ընթացքին սեփական վարժարաններուն մէջ պաշտօնավարող ուսուցիչներու սենդիքայի նախագահ Նաամէ Մահֆուտ յայտարարեց, որ իրենք պիտի շարունակեն բողոքի հաւաքները, եթէ իշխանութիւնները չվաւերացնեն արդար օրինագիծ մը: Մահֆուտ դիտել տուաւ, որ փտածութիւնը տարածուած է նաւահանգիստին, ծովային սեփականութիւններուն եւ այլ հաստատութիւններու մէջ, ուստի անհրաժեշտ է բարեկարգումներ կատարել եւ ապահովել աշխատաւորներուն արդար իրաւունքները: Խորհուրդի անդամ Հաննա Ղարիպ մերժեց մասնատուած կամ չհաւասարակշռուած որեւէ օրէնք եւ կոչ ուղղեց պայքարելու դրամատէրներուն դէմ: Ղարիպ հերքեց երեսփոխանները գողեր անուանելը եւ կոչ ուղղեց նոր տուրքեր չսահմանելու աղքատներուն վրայ: Ան վերստին նշեց, որ պետական քննութիւններ տեղի պիտի չունենան այս տարի, եթէ խորհրդարանը չվաւերացնէ յաւելումի արդար օրինագիծ մը:

Իսկ Լիբանանի Ընկերային Ապահովագրութեան Հաստատութեան (Տաման) աշխատակիցները երկօրեայ գործադուլ կազմակերպեցին եւ մերժեցին ստանձնել քաղաքացիներուն թղթածրարները: Հաստատութեան պաշտօնեաները ներկայացուցին շարք մը պահանջքներ եւ կը սպառնան մագլցողական քայլերու ձեռնարկել, եթէ իշխանութիւնները չգոհացնեն իրենց պայմանները:

## ՊԸՇԱՐԱ ՌԱԱՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ
## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Վատիկանի բանբեր Ֆետէրիքօ Լոմպարտի Ռոյթըրզ լրատու գործակալութեան տրուած հարցազրոյցի մը մէջ յայտարարեց, որ մարոնիներու կարտինալ Պըշարա Ռաաի պատրիարքը մաս չի կազմեր Հռոմի Ֆրանչիսկոս Պապի սրբազան հողեր կատարելիք այցելութեան պաշտօնական պատուիրակութեան, այլ այդ այցելութեան պիտի միանայ անհատական նախաձեռնութեամբ: Ռաաի ցաւ յայտնեց իր Երուսաղէմ եւ սրբազան հողեր այցելութեան դէմ արձակուած քննադատութիւններուն համար:

Ան վերահաստատեց, որ իր այցելութիւնը քաղաքականութեան հետ որեւէ կապ չունի:

Մարոնիներու պատրիարքը դրուատեց Լիբանանեան Բանակին եւ ապահովական ուժերուն ազգային առաքելութիւնը, որուն շնորհիւ կը պաշտպանուի երկրին կայունութիւնը: Ռաաի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Լիբանանեան Բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Ժան Քահուաժիի հետ: Պատրիարքը նաեւ տեսակցեցաւ արտաքին գործոց նախարար Ժըպրան Պէսիլի հետ, քննարկելու համար նախագահական ընտրութեան թղթածրարի ընդհանուր զարգացումները:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրի յայտարարած է թէ երկրի հանրապետութեան նախագահի ընտրութեան թուականն է Մայիս 25, 2014: Այս կապակցութեամբ մեծ ճիգեր կը տարուին ընտրութիւնը օրինական ձեւով յաջողցնելու համար:

- Վատիկանի շրջանակներուն համաձայն քաղաքական լուրջ խորհրդակցութիւններ կը կատարուին Եւրոպայի Միութեան անդամ երկիրներու, Ռուսիոյ եւ ԱՄՆ-ի պետական շրջանակներուն հետ, ապահովելու համար յառաջիկայ Մայիս 25էն առաջ յաջողցնելու հանրապետութեան նախագահի ընտրութեան օրակարգը:

www.massispost.com

## 720 ՀԱԶԱՐ ՍՈՒՐԻԱՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ
## ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Ներկայիս Թուրքիոյ իշխանութիւնները մտահոգող հիմնական հարցերէն մին է հոն ապաստանած 720 հազար սուրիացի գաղթականներու իրավիճակը: Անգարայի կառավարութիւնը կը ծրագրէ երկարատեւ օժանդակութիւն ապահովել միջազգային համայնքէն: Արդարեւ սուրիացի գաղթականներուն համար ցարդ կատարուած նիւթական յատկացումները հասած են 3 միլիառ տոլարի: Բացի մարդասիրական օժանդակութենէն Թուրքիոյ մտահոգութիւններէն մին է նաեւ սահմաններու եւ բնակչութեան ապահովութեան հարցը իրենց համար յարմարագոյն լուծումը՝ կողմերու միջեւ փոխ զիջումներու եզրայանգումն է:

Անգարա կը մտածէ նաեւ գաղթականները ներգրաւել եւ ձուլել Թուրքիոյ ընկերային կեանքէն ներս: Օրինականացնել անոնց բնակութիւնը, զանոնք ենթարկելով 2013 թուականին որոշած օտարահպատակներու եւ գաղթականներու կարգավիճակին: Այսպիսով պիտի կարենան աշխատանքի եւ թրքերէն լեզուի ուսուցման արտօնութիւն ստանալ: Սակայն նման կարգավիճակ մը բուռն կերպով քննադատուած է երկրի արմատականներուն կողմէ:

## ՍԷՈՒՏԱԿԱՆ-ԻՐԱՆԵԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար իշխան Սէուտ Ֆայսալ յայտարարեց, որ Ռիատ այցելելու հրաւէր ուղղած է իր իրանցի պաշտօնակից Մոհամմէտ Ժաւատ Զարիֆին: Սէուտ Ֆայսալի համաձայն, սէուտական իշխանութիւնները պատրաստ են բանակցելու Թեհրանի հետ եւ բոլոր տարակարծութիւնները քննարկելու: Նախապէս, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան քարտուղար Չաք Հէյկըլ ժամանած էր Ժետտէ, ուր սէուտցի պատասխանատուներու հետ քննարկած էր Սուրիոյ եւ Իրանի թղթածրարները:

Իրանի արտաքին գործոց նախարարը մինչ այդ ժամանեց Վիեննա, ուր պիտի մասնակցի գեր պետութիւններուն հետ բանակցութիւններու հերթա-կան փուլին, քննարկելու համար Իրանի հիւլէական թղթածրարը: Զարիֆ յայտարարեց, որ իրենք լրջօրէն կը մտադրեն համաձայ-նութեան յանգիլ:

## ԱՊՕՐԷՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՆԱՒ ՄԸ
## ԸՆԿՂՄԱԾ ԼԻՊԻՈՅ ՄԷՋ, 40 ՀՈԳԻ ՄԱՀԱՑԱԾ

Լիպիոյ Թրիփոլի քաղաքէն ստացուած լուրերու համաձայն ապօրէն գաղթականներ փոխադրող նաւ մը ընկղմելով 40 ուղեւորներու մահուան պատճառ դարձած է: Լիպիոյ ներքին գործոց նախարար Ռամի Քաալի ըսած է թէ 50 ճամբորդներ փրկուած են: Անոնք մեծ մասամբ Ափրիկէի անապատային շրջաններէն եւ Եգիպտոսէն հաւաքուած էին եւ կ'ուղեւորուէին դէպի Եւրոպական ափերն ու Մալթա կղզին:

Նշենք նաեւ որ 2011 թուականի լիպիական յեղափոխութենէն ի վեր երկիրը թիրախ դարձած է եւ կայք դէպի Իտալիա եւ Մալթա ու այլ շրջաններ մեկնող ապօրէն գաղթականներու: Ներկայիս Լիպիոյ համար մեծ մտահոգութիւն է ապօրէն կերպով երկիր ժամանողներու հարցը:



## ԴԱՍ ՄԸ ՇՈՒՇԻԷՆ

*Վեցամեայ Ղարաբաղեան Պատերազմի (1988-1994 թուականներ) ընթացքին, անտարակոյս, Շուշիի ազատագրութիւնը հանդիսացաւ ամենաբեկումնային իրադարձութիւնը: Շուշիի ազատագրութեան ռազմական հմուտ գործողութիւնը, որ յաջողութեամբ պսակուեցաւ 9 Մայիս 1992-ին, գլխովին շրջեց հայ-ազերի ուժերուն հաւասարակշռութիւնը եւ նոր թափ ու եռանդ ներարկեց հայկական կողմին: Եթէ մինչ այդ, հակա մարտ կողմերը փոխարինաբար կ'արձանագրէին մերթ յաջողութիւններ եւ մերթ ձախողութիւններ, ապա Շուշիի վճռորոշ գործողութիւնը պատերազմին ընթացքը թեքեց ի նպաստ հայկական կողմին, քանզի չոր ճշմարտութիւնը հետեւեալն է՝ ան որ կը տիրէ Շուշիին, կ'իշխէ Արցախին:*

*Այսօր, այդ փառապանծ յաղթանակին տարեդարձն է:*

*Արդարեւ, այդ յաղթանակը իր մէջ կ'ամփոփէ երեք երեսակներ.*

*ա) Ռազմական.- Շուշիի նման անառիկ դիրքի մը նուաճումը յախուռն եւ տարերային գործողութեան մը հետեւանքը չէր կրնար ըլլալ: Ռազմարուեստի փայլուն դրսեւորում մը կ'ենթադրէր այդ, ճշգրիտ, մտածուած եւ դիպուկ հարուածի մը արդիւնքը, որ լաւագոյնս իրագործեցին հայ հրամանատարներն ու զօրականները, որ գերազանցապէս ի կատար ածեցին անձնդիր մարտիկներն ու կամաւորները: Շուշիի օդակումին, գրոհին եւ ազատագրումին մէջ, անկասկած, փորձառու զօրավարին տաղանդի կողքին իր սքանչելի ներդրումը ունեցաւ հայ զինուորի ոգին ու անոր ազատատենչ խոյանքը: Այս առումով, վստահաբար, Շուշիի առումը գրուած է իր փայլուն էջը հայոց պատմութեան հերոսապատումի մատեանին մէջ:*

*բ) Քաղաքական.- բնականաբար, ռազմական առաւելութիւնը բանակցութեան սեղանին վրայ յաղթական կողմը կ'օժտէ հնչեղ եւ ազդու ձայնով: Ակնյայտօրէն, պարտեալ ազերին, ղարաբաղեան հակամարտութեան լուծման ուղիներուն որոնման ընթացքին ցոյց կու տայ ջղագրգռութեան եւ անհանդուրժողութեան յուսահատ նշաններ: Ան խոնարհած զէնքի կողքին ունի կքած քամակ, նսեմացած հոգեվիճակ: Շուշիով սկսած անոր անփառունակ պարտութիւնը կ'արտայայտուի նաեւ քաղաքական մարզին մէջ, որովհետեւ՝ իր դիմաց կանգնած է 9 Մայիս 1992-ը կերտած հայկական կամքն ու զէնքը, ոգին եւ վճիռը:*

*գ) Հոգեբանական.- Շուշիի ազատագրութիւնը էութեամբ շրջեց հիւանդագին կարծրատիպ մը: Հայուն ստորակայութեան, զոհի եւ ճնշեալի ընդհանրացած պատկերը փոխարինուեցաւ յաղթողի, նուաճողի եւ մարտնչողի պատուաբեր բարենիշներով: Մեր ողջ պատմութեան հոլովոյթին խիստ կարիքը ունեցած ենք հոգեկան այս ցնցումին, սթափութեան եւ ինքնավստահութեան: Անընդունելի է համակերպիլ յարատեւ պարտութեան, ջարդի եւ գաղթի ճակատագիրին: Սերունդներ չեն կրնար գոյատեւել լոկ պարտութեան դրուագներով եւ ոգեկոչումներով: Ընդհակառակը՝ հերոսականութիւնն ու դիւցազնասիրտ սխրանքները հիմնական կռուաններն են երիտասարդութեան առողջ եւ խիզախ դաստիարակութեան, աւիշները՝ նորանոր զօտեմարտերու եւ ոգորումներու: Շուշին հոգեպէս բարձրացուց հայուն կամքն ու կորովը. պատգամեց՝ որ ի պահանջել հարկին՝ հայը գիտէ յաղթել, կրնայ յաղթել եւ պիտի յաղթէ ապագային:*

*Ո՞ւր է գաղտնիքը Շուշիի ազատագրութեան: Ո՞րն է դասը Շուշիին:*

*Շուշին, Ղարաբաղը եւ ընդհանրապէս անդրկովկասեան իրադարձութիւնները պէտք է դիտարկել ընդհանուր պարունակի մէջ: Տարածաշրջանին վրայ հակակշիռ հաստատելու, առաւելագոյնս տարածքներ ձեռք ձգելու պայքարը եղած է թէժ եւ արիւնալի: Յատկապէս հայ-ազերի հակասութիւնները Նախիջեւանէն մինչեւ Պաքու, Գանձակէն մինչեւ Զանգեզուր եւ Լոռի ու Արցախ արձանագրած են կատաղի մակընթացութեան եւ բուռն տեղատուութեան հանգրուաններ՝ խլելով հազարաւոր կեանքեր, անմեղ զոհեր, աւերներ, աւարներ, պատճառելով թշնամանք ու ատելավառ սերունդներ: Այս ծիրին մէջ, ուշագրաւ են երեք փուլեր՝ 1905-1906թ. հայ-թաթարական բախումները, 1918-1923թ. Հայաստանի եւ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ընդհարումներն ու մրցակցութիւնները եւ վերջապէս 1988-1994 թուականներու Ղարաբաղեան Պատերազմը, որ յատկանշուեցաւ ոչ միայն Արցախի հայկականացմամբ, այլ՝ Սումկայիթի, Պաքուի, Կիրովապատի*

*Շար.ը էջ 18*

## ՀԵՐՈՍՆԵՐՆ ԵՆ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ՆՈՒԱՃՈՒՄ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

*Շուշիի ազատագրման 22-րդ տարին ենք թեւակոխում հայեացքներս յառած դէպի լուսապայծառ ապագային եւ յուսավառ սպասում ենք Արցախի ճանաչումը իր պապենական տարածքների վրայ: Ինչ փոյթ, կ'ուզեն ճանաչեն, կ'ուզեն չճանաչեն, ամէն ինչ վերջացած հարց է, Արցախցին քաջահամբաւ ապրում է իր պապենական հողերի վրայ եւ որեւէ մի ձեւով մի թիզն իսկ չի զիջելու, քանզի բազում նահատակների արիւն է թափուել դարերի եւ մեր նորագոյն տարիների հոլովոյթում հայրենին պահելու եւ բռնագրաւուած հողերը ազատագրելու համար:*

*Ջախջախուած են ստրկութեան կապանքները, որոնք տարիների թաւալման հետ միասին հիւծում, տանջում եւ զրկում էին արցախցիներին իրենց հայկական կեանքից եւ ազգային մշակոյթից:*

*Ասում են ՝ պատմութիւնը կրկնւում է, չիտակ է, սա հետեւութիւն է պատմութիւնից, քանի որ անցեալի մեր սխրագործ պապերի ապրած կեանքի դրուագներն են խթան ու մղիչ ուժ հանդիսանում մեր ներկայ սերնդի զաւակներին, որ խորապէս համոզուած արտայայտում են ներկայ ժամանակների պահանջը, որն է՝ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն, անշուշտ անցեալում ուժն է եղել, հիմա էլ ուժն է, ապագայում էլ նոյնն է լինելու, հետեւաբար՝ հայրենի իշխանութիւնները հայոց պետականութիւնը պիտի որ խարսխեն զօրութեան եւ հզօրութեան վրայ:*

*Արցախի ազատագրման սկզբնական տարիների կռիւներում տեսանք թէ ինչպէս օմօնականները Սողոմ-Գոմորի էին վերածել գրադ կոչւող զէնքի տեսակով Ստեփանակերտն ու շրջակայ բնակավայրերը: Գետնայարկ նկուղներն էին ապաստանել ծերերն ու հիւանդները, կանայք եւ երեխաները:*

*Գերագոյն խորհրդի ժողովները անցնում էին ծննդաբեր կանանց հետ միասին մէկ սրահում վարագոյրով առանձնացուած: Ստեփանակերտի երկնքից անընդհատ վիշապներ էր թափում օմօնականների արձակած հրթիռներից: Օրըստօրէ սեղմւում էր պաշարման շղթան, ոչ սնունդ էր հասնում, ոչ էլ աշխարհն էր տեղեակ, թէ ինչպէս մի ժողովուրդ ողջակէզ է դառնում իր իսկ հողի վրայ, իր իսկ տան մէջ:*

*Մահուան ստուերը հետզհետէ տարածւում էր Ստեփանակերտի վրայ, դանակը ոսկորին էր հասել, եթէ չկատարուէր ամենաէականը, ինչ որ աւելի կանուխ պիտի մտածուէր ու գործադրուէր: Վերջապէս պահանջը հնարք է ծնում, կատարուեց հերոսական գաղտնորոշում , տիտանները առաջ նետուեցին, պէտք էր ոչնչացնել Ստեփանակերտը սակաւ առ սակաւ դէպի մահ տանող Շուշիի գրադ կայանները: Դարձեալ մի բուռ կորիւններ հերոսաբար նետուեցին պարիսպներից դէպի այն կողմ դարան մտած թշնամու վրայ: Երկու օր տեւեց կենաց եւ մահու կռիւը: Թշնամին ընկրկեց, թշնամին փախուստի դիմեց, հայի թշնամին միշտ նահանջել է հայի հերոսական եւ միասնական զօրութեան ի տես, հայի ճակատին պիտի դաջուի, որ պէտք է միշտ զօրեղ լինել իր գոյութիւնը ապահովելու համար:*

*Փրկուեց Շուշին 1992 թւի Մայիս 9-ին, լոյս ծագեց հինաւուրց հայոց քաղաքին: Ընկան հերոսներից մի քանիսը, այսպէս է եղել, միշտ մեծ գործերը զոհի արիւնով է արգասաւորւում, նա որպէս ցորենի հատիկ, մեռնում է հողի մէջ, որպէսզի դարձեալ ընձիւղուեն նոր հերոսներ, նոր մարտնչողներ, երբ վտանգւում է հայրենին: Հայրենիքի պաշտպանութեան կռիւներում զոհեր լինում են, բայց ոչ թէ կռուի գնալ զոհուելու նպատակով, այլ՝ թշնամուն յաղթելու եւ փառքով հերոսի սխրագործութեան անուն վաստակելու համար:*

*Ահաւասիկ քսան երկու տարի է, որ Շուշին ազատագրուած է, ամէն տարի պարծանքի ուրախ միջոցառումներով տօնւում է նրա ազատագրման տարեդարձը: Այս հայոց քաղաքը այլազան վէրքեր է տեսել իր վրայ, նա դարձել էր Փանա խանի եւ նրա յաջորդների որջը, որտեղից դաւեր էր դիւթւում Արցախի բնակչութեան վերջ տալու համար: Գեղեցիկ Շուշին կորցրել էր իր հայկական փայլն ու պճնանքը, բռնի պարպուել էր եւ սրի էր քաշուել ազգաբնակչութիւնը եւ վերածուել մահ ու սարսուռ տարածող կենտրոնի: Այժմ նա հարազատ ծնողի գրկումն է, որ պիտի ծաղկի նոր կեանքով՝ սրտցաւ խնամքի ներքոյ: Բիւր յարգանք Շուշիի ազատագրման ճամբին ապրող հերոսներին եւ նահատակի փառքով ընկածների անթառամ յիշատակին, խունկ ու աղօթք նրանց լուսոյ խորանին, որ իրենց արեամբ ցուցաբերեցին հայրենասիրութեան եւ ազգասիրութեան մեծ սխրանք եւ օրինակելի կեանք:*



# ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ 87-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ



Լաս Վեկասի Հայաստանեայց Առաքելական եկեղեցին՝ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տէր Նարեկ Քհնյ. Մաթարեանը, Ծխական Խորհուրդը եւ Տիկնաց Միութիւնը ուրախութեամբ դիմաւորեցին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանը, Հոգեւորականաց դասը, Տիկնաց միութիւններու պատգամաւորները եւ 87-րդ պատգամաւորական պատկառելի ժողովի յարգարժան անդամները:

Առաւօտեան, տեղի ունեցաւ Տիկնաց միութիւնները ներկայացնող պատգամաւորական ժողովը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Տէրունական աղօթքէ ետք, տիկնաց կեդրոնական միութեան ատենապետուհին Տիկ. Կլատիս Սարոյեան, ողջունեց ներկաները, նաեւ ուրախութեամբ ներկայացուց Երէցկին Պայծառ Մաթարեանը, որ Լաս Վեկաս եկեղեցւոյ Տիկնաց միութեան ատենապետուհին է:

Ապա, հոգեւոր պատգամ փոխանցեց, Արժ. Տէր Յովէլ Քհնյ. Օհանեանը, Օքլանտ՝ Ս. Վարդան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ: Տէր հայրը առաւելաբար մատնանշեց յոյսի գաղափարը իր պատգամին մէջ, որը՝ քրիստոնէութեան հիմնական առաքինութիւններէն մէկը կը ներկայանայ:

Ժողովը քննարկելէ ետք գալիք տարուայ եւ յաջորդող ծրագիրները, Առաջնորդ Սրբազան Հայրը հանդէս եկաւ իր քաջալերող եւ հոգեւոր պատգամով, որուն մէջ ընդծեց քանի մը կարեւոր կէտեր, տիկիններու եկեղեցիէն ներս ծառայութեան առնչութեամբ: Ան ըսաւ. «Թեմի տիկնաց միութիւնները պէտք է աւելի՛ն կեդրոնանան համայնքի հոգեւոր պահանջքներու վրայ: Որքան որ կը հեռանանք արդիական յառաջացող մարտահրաւէրներէ, այնքանով մենք որպէս կազմակերպութիւն կը տկարանանք: Մենք պէտք է վերակազմակերպուինք եւ կեդրոնանանք արդիական հարցերու եւ խնդիրներու վրայ, որովհետեւ այդ ժամանակ է որ քրիստոնէական դաստիարակութիւնը մեր ընտանիքներու, երիտասարդներու, աղքատներու եւ մարդասիրական բոլոր ծառայութիւններէն ներս մուտք կը գործէ եւ կ՚իրագործուի»:

Սրբազան հայրը իր խօսքի աւարտին, հրաւիրեց տիկինները աւելիով կարեւորութիւն դարձնելու, կիրակնօրեայ դպրոցներու աշխատանքին, որ մեր եկեղեցիներէն ներս կը ներկայանայ այն բոյնը, ուր մեր սիրելի ժողովուրդի զաւակները, կը դաստիարակուին հոգեւոր եւ քրիստոնէական բարոյագիտութեամբ: Նաեւ սոյն ժողովը ներկայացուց որպէս առիթ, իւրաքանչիւրին համար, վերաշահելու եւ վերագտնելու մեր քրիստոնէական ինքնութիւնը, որ ընդհանրապէս այս դարուս մէջ սկսած է կորսնցնել իմաստն ու արժէքը:

Նոյն օրը երեկոյեան, այս անգամ հոգեւորական քահանայից դասը, 22 անդամներէ բաղկացած, Տէրունական աղօթքով, ապա Աւետարանի ընթերցումով բացումը կատարեցին հոգեւոր ժողովին:

Աւետարանի ընթերցումէն ետք, կարդացուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգեւոր պատգամը: Վեհափառ Հայրը, իր պատգամով քաջալերեց հոգեւորականները եւ հրաւիրեց գիրենք ծառայելու խոնարհութեամբ եւ վերանորոգուած ոյժով:

Ապա, Արժ. Տէր Եսայի Քհնյ. Պետրոս, փոխանցեց հոգեւոր պատգամը: Շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք յայտնելէ ետք Թեմիս առաջնորդ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանին՝ զինք ընդունելու Հիւսիսային արեւմտեան Թեմէն ներս, աղօթքի մասին իր պատգամը փոխանցեց, որուն մէջ շեշտեց աղօթքը՝ որպէս երկխօսութիւն, պէտք չէ՛ ըլլայ միայն խնդրանք, այլ՝ նաեւ գոհաբանութիւն եւ փառաբանութիւն: Իսկ աղօթքի մեծագոյն օրինակը, մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեզի փոխանցեց, երբ աղօթեց՝ «Հայր Մեր»ը՝ Տէրունական աղօթքը:

Ապա, մի քանի հոգեւորականներ հանդէս եկան տարբեր նիւթեր քննարկելով, ինչպէս՝ Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման ծրագիրներ, Սարկաւագաց պատրաստութեան դասընթացքներ: Աւարտին սրբազան հօր պատգամը ամբողջացուց եւ եզրակացուց ժողովին նպատակը, ամփոփելով քանի մը նախադասութիւններու մէջ, ան ըսաւ. «Հիւսիսային արեւմտեան Թեմի, Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ առաքելութիւնն է՝ հայ ժողովուրդը առաջնորդել առ Աստուած՝ քարոզելով Աւետարանը մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի, որպէս քահանաներ՝ դաստիարակել երիտասարդութիւնը, համաձայն առաքելական եկեղեցւոյ սրբութիւններուն եւ աւանդութիւններուն, կատարել հովուական պարտաւորութիւնները, առաջնորդելով հաւատացեալը արդարութեան ճանապարհ»:

Սոյն հոգեպարար եւ քահանայի առաքելութեան խորհուրդով, Սրբազան Հօր կողմէ, ժողովը եզրափակուեցաւ աղօթքով:

Ուրբաթ 2 Մայիս:

Առաւօտեան ժամը 9.00, աւելի քան 110 պատգամաւորներ միատեղ հաւաքուած էին: Տէրունական աղօթքէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հոգեւոր պատգամով եւ օրհնութեամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն յղուած, բացումը կատարեցին 87-րդ պատգամաւորական ժողովին:

Օրուայ հոգեւոր պատգամը փոխանցեց Արժ. Տէր Զաքարիա Քհնյ. Սարիբէկեան, Արիզոնայի Ս. Աբգար եկեղեցւոյ հոգեւոր հովիւ: Ան շեշտելով ամենօրեայ աղօթքի կարեւորութիւնը, որպէս միջոց հաւատքի զօրացման, հրաւիրեց ներկաները անձանձրոյթ աղօթել, ստանալու Տիրոջ օրհնութիւնը:

Ժողովի ընթացքին հանդէս եկան հոգեւորականներ եւ պատգամաւորներ, որոնք խօսեցան զանազան նիւթերու եւ ծրագիրներու շուրջ, ինչպէս Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչում, երիտասարդաց ծրագիր, հոգեւորական պատրաստութեան ծրագիր, եւ այլ հարցեր:

Հետեւեալ հարցերու քննարկման նպատակը պարզապէս գրուցել չէր, այլ նաեւ անոնց լուծումը եւ պատշաճ որոշումները կայացնել: Եւ իսկապէս որ այդ որոշումները կատարուեցան, առ ի բարգաւաճում եւ ի բարօրութիւն, Հայաստանեաց առաքելական եկեղեցիներուն, որոնք կը գտնուին Հիւսիսային-Արեւմտեան Թեմէն ներս: Ժողովի նպատակը սովորական հաւաքոյթ մը չէր, այլ մեր եկեղեցւոյ եւ սիրեցեալ հաւատաւոր ժողովուրդին հոգեւոր եւ քրիստոնէական կարիքները գոհացնել:

Ի վերջոյ, Առաջնորդ սրբազան հօր պատգամով եւ քաջալերանքով, պատգամաւորներ, լիցքաւորուեցան ծառայութեան ոգիով, նպատակ ունենալով Արեւմտեան Թեմի առաքելական եկեղեցիներուն բարգաւաճումն ու բարելաւումը:

Ան իր խօսքը աւարտեց հետեւեալ բառերով. «Պատգամաւորական Ժողովը պատասխանատու այն մարմինն է, ուր մենք պիտի զգանք այնպէս ինչպէս զգացին Քրիստոսի առաքեալները Վերնատան մէջ, Անոր Համբարձումէն վերջ եւ առաջնորդուեցան Սբ. Հոգու շնորհներով: Տաճար ենք Աստուծոյ Հոգիին բնակութեան եւ այս գիտակցութիւնը սերունդէ-սերունդ փոխանցելու սեպուհ պարտականութիւնը ունինք: Քրիստոս երիցս կը խօսի մեզմէ ամէն մէկուն Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս - ու մեր պատասխանը պիտի ըլլայ հաստատակամ. «Այո Տէր, եւ դու գիտես զի սիրեմ զքեզ»:

# ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ «ԱՊՐԻԼ» ԳՐԱՏԱՆԸ



Շահեկան դասախօսութիւն տեղի ունեցաւ Մայիս 9, 2014 թիւ երեկոյեան ժամի 8-ին «Ապրիլ» գրատան մտերմիկ յարկին ներքոյ ընթերցասէր եւ պատմութեամբ հետաքրքրւող հրաւիրեալների ներկայութեամբ:

Դասախօսն էր՝ պրոֆ. Սեդա Տատոյեանը, հրաւէրով եկած էր Նիւ Եորքից:

Միջոցառման մեկնարկումը կատարեց գրատան սեփականատէր՝ Առնօ Երիցեանը: Նա արժանավայել հակիրճ բառերով ներկայացրեց ազնուափայլ դասախօսուհուն եւ հրաւիրեց սկսելու իր ելոյթը:

Շնորհալի եւ տաղանդաւոր անձնաւորութիւն՝ համալսարանի դասախօս, երեք պատմական գրքերի՝The Armenians in the medieval Islamic word (եօթերորդ - տասնչորսերորդ դարեր) եւ պատմութեան առնչւող բազմաթիւ գիտական յօդուածների հեղինակ լոյս ընծայուած անգլերէն լեզւով:

Դասախօսութեան նիւթն էր՝ «Նոր պատմագիտութիւն՝ ի խնդիր նոր հայագգացութեան»:

Նիւթին առընթեր լայն բացատրութիւն տրուեց պատմագիտութեան մասին ի մասնաւորի քննական եւ ստոյգ պատմութեան կարեւորութիւնը շեշտեց հետագայ սերունդների կողմնորոշման ի նպաստ: Յարգելի դասախօսը նիւթը ներկայացրեց ըմբռնելի բացատրութիւններով, այնպէս որ՝ սովորականից առաւել միջոցը հետաքրքրասիրութեամբ ընկալուեց ներկաների կողմից:

Հարցերին պատասխանեց գիտականօրէն մտածուած բացատրութիւններով:

Կատարուեց հիւրասիրութիւն, գրքերի վաճառք հեղինակի մակագրութեամբ:

Թղթակից

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ԹՈՒՐՔԻՈՅ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՅՑԸ ԼԻԲԱՆԱՆ



Մայիս 2-էն 6, Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի հիւրն էր Սոցիալիստ Վերակազմեալ Կուսակցութեան (SYKP) հիմնադիր եւ Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (HDP) Կեդրոնական Վարչութեան անդամ Քատիր Աքընը:

Հիւրը անցեալ տարի Յունիսին, Կ. Պոլսոյ մէջ Հնչակեան Քսան Կախաղաններու 98-րդ ամեակի ոգեկոչման կազմակերպիչներէն էր:

Այցելութեան նպատակը, Հնչակեան Կուսակցութեան, Փարամազի եւ Քսաններու կախաղան բարձրանալուն մասին արխիւային եւ ստոյգ տեղեկութիւններ հաւաքելն էր: Այդ նիւթերը յաջորդ տարի Ցեղասպանութեան 100-ամեակին, ինչպէս նաեւ Քսաններու 100-ամեակին առթիւ պիտի ծառայեն որպէս նիւթ կարգ մը ձեռնարկներու համար:

Յարգելի հիւրը չորս օրերու ընթացքին ծանօթացաւ Լիբանանի զբօսաշրջիկային վայրերուն, հայկական գաղութի կառոյցներուն, այցելեց դպրոցներ, ակումբներ եւ «Արարատ» օրաթերթ:

Գերմանական Աստուածաբանական ճեմարանին մէջ ուսանած ժամանակ ան կը լսէ հայերուն եւ անոնց կոտորածներուն մասին: 1909 թուականին Կիլիկիոյ եւ ի մասնաւորի Ատանայի ու Մարաշի աղէտներուն տագնապալի լուրերը սկսան հասնիլ Եւրոպա: Պիւլ որոշեց իր կեանքը նուիրել հայ ժողովուրդի կարիքներուն, սակայն պէտք էր սպասէր մինչեւ 1911 թուական, որպէսզի հասնէր Մարաշ եւ սկսէր իր հոգեւոր ու մարդասիրական գործունէութեան՝ հայկական որբանոցին մէջ: Եւ «չուշցաւ» 1915 թուականի Եղեռնը, որ Աննա Հետուիկ Պիւլի կեանքին համար դարձաւ անկրկնադարձային, եւ ինչպէս ինք կը գրէ իր յուշերուն մէջ՝ «... Երբ 1915 թուականին՝ Զատկուան օրը, հայերուն բաժին ինկաւ այդ սարսափելի աղէտը, իմ ականջիս մէջ անդադար կը հնչէին հետեւեալ բառերը. «Ո՞ւր է քու եղբայրդ՝ Աբէլը. անոր արեան ձայնը գետնէն ինծի կը բողոքէ»: Պիւլ կը շարունակէ. «Այո՛, անոնք բոլորը իմ քոյրերս եւ եղբայրներս էին, որոնք հաւաքուած էին մեր Տիրոջ տունը, երբ նախապատրաստուած կոտորածը հասաւ Մարաշ քաղաքը: Կիներ, տղամարդիկ, ծերեր՝ հաշմանդամ, կոյր, հիւանդ, օրեր շարունակ կը քալէին քարքարոտ արահետներէն՝ այրող արեւուն տակ: Կը քալէին լուռ, առանց արցունքի»: Եթէ դէպի մահ գացող այդ բոլոր հայորդիները կը քալէին լուռ եւ առանց լացի, սակայն Պիւլ չէր կրնար լուռ մնալ եւ չարտասուել: Եւ ան դարձեալ կը բացագանչէ եւ յուշերուն ընդմէջէն. «Ո՞վ է հաշուողը մեռնողներու դիակներուն, որոնք ինկած են այդ մահուան ճամբուն ամբողջ երկայնքին: Ու տակաւին կորսուած այն բոլոր երեխաներուն, որոնք լացով կը փնտռէին իրենց մայրերը»:

Բայց Աննա Պիւլ պիտի տեսնէր աւելին: «Կանուխ առաւօտեան զէնքի կրակոցներու ձայները զիս արթնցուցին: Հայ գերիները շղթաներով կապուած, մէկը միւսին ետեւէն կը գնդակահարուէին մեր տան ներքեւ: Արդեօք այս դիակներու կոյտերը՝ արիւններու մէջ շաղախուած, իմ եղբայրներս չէ՞ն»:

Եւ այս եղբայրներուն «դիակներ»-ն ու անոնցմէ «ողջ» մնացած որբերը Աննա Պիւլը մղեցին ալ աւելի իր կեանքը մխրճելու հայ ժողովուրդի վերապրիլը երաշխաւորելու հրամայականին մէջ:

Եթէ Աննա Պիւլ մեծ թիւով հայ երեխաներ կրցաւ փրկել թրքական եաթաղանէն եւ պատսպարել զիրենք որբանոցներու մէջ, բայց նաեւ ան դաստիարակեց զանոնք եւ կազմակերպեց Մարաշի հայկական որբանոցը: Եթէ հայ որբերուն սորվեցուց գրել եւ կարդալ, բայց նաեւ՝ Աստուածաշունչ, որովհետեւ անոնց մէջ կը տեսնէր «ընկճուածութիւն, բայց նաեւ՝ վախ ու բարդոյթ»:

Աննա Պիւլ հայերէն սորվեցաւ: Ան կրցաւ տեսնել, թէ այս որբացած հայ երեխաներուն վերապրելու հրամայականը իրենց մայրենի լեզուին պահպանման մէջ էր: Ան կրցաւ տեսնել մշակոյթին արժէքը եւ անոր կարեւոր դերը հայ ազգին ինքնապահպանման հոլովոյթին մէջ: Ան որբանոցին մէջ արգիլեց թրքերէն խօսիլ, բայց նաեւ աւելին: Ան «ստիպեց» թրքախօս աշխատողներուն, որպէսզի հայերէն սորվին:

Համաշխարհային Ա. պատերազմի աւարտին հետ եւ Գերմանիոյ ու իր դաշնակիցներուն պարտութեամբ, գերմանացի ուսուցիչներուն արտօնուած չէր այլեւս մնալ շրջանին մէջ:

Պիւլ կրցաւ մնալ մինչեւ 1919 թուական՝ իբրեւ էսթոնացի... Սակայն ինքն ալ ստիպուած եղաւ հեռանալ երկրէն՝ նկատի ունենալով իր պալթեան-գերմանական արմատները եւ իր ետին ձգելով իր բոլոր «զաւակները»: Պիւլի համար ասիկա «աքսոր»-ի համազօր էր:

Բայց Աննա Պիւլի միտքը, հոգին եւ մանաւանդ սիրտը չդադրեցաւ բաբախելէ հայուն կարօտով: Ան կը հետեւէր իւրաքանչիւր իրադարձութեան: Յստակ էր Աննայի համար, թէ ան «հայերէն հեռու չէր կրնար մնալ»: 1922 թուականին ֆրանսական նոր կազմակերպուած «Արեւելեան քրիստոնէական առաքելութիւն» հոգեւոր եւ մարդասիրական կազմակերպութեան հետ հասաւ Հալէպ: Հալէպ, ուր Ցեղասպանութենէն ետք ապաստան գտած էին հազարաւոր հայեր: Եւ Հալէպի մէջ ան ապրեցաւ իր կեանքին ամէնէն «դժուար» տարիները:

«Արդէն քանի մը օր է ձմեռ է: Ցուրտ եւ անձրեւոտ: Գաղթականներու ճամբարներուն մէջ ամէն տեղ աղքատութիւն է: Կաւէ պատերը կը քանդուին եւ տնակներ ջուրով կը հեղեղուին:

Ամէն տեղ կան հիւանդներ, որոնք պառկած են ցուրտի եւ խոնաւութեան մէջ»:

Բայց Աննա Պիւլ հաւատացած էր վերապրելու հրամայականին:

Ան շուտով կազմակերպեց հիւղաւաններու եւ ճամբարներու կից հիւանդանոցային սարքաւորումներ: Այս ծրագիրին զուգահեռ գործարան մը ստեղծելու գաղափարը յղացաւ:

Շուտով կարելի եղաւ ստեղծել գորգեր, ժանեակներ եւ այլ կենցաղային իրերու գործարան մը, ուր աւելի քան հինգ հարիւր հայուհիներ աշխատանք գտան: Գործարանին արտադրանքները կը ղրկուէին Եւրոպա:

Աննա Պիւլ չմոռցաւ երեխաները եւ անոնց կրթութիւնը: Կրցաւ ապահովել կրթաթոշակներ, որոնց շնորհիւ աւելի քան 250 հայ երեխաներ Հալէպի դպրոցներուն մէջ ուսում ստացան:

Պետական մակարդակի վրայ կապեր հաստատեց, որպէսզի կարելի ըլլայ հին հիւղաւանները նորոգել եւ նոր տնակներ կառուցել: Ու տակաւին՝ ան աշխատանք տարաւ, որպէսզի Հալէպի հայկական թաղամասին համար նաեւ ապահովուի ջուրի մատակարարում:

Աննա Պիւլ ապրեցաւ հայուն վիշտը: «Այս հայերուն իւրաքանչիւրը ունի իր վիշտը, որ իրենց հետ բերած են իրենց կորսուած հայրենիքէն: Այդ վիշտին հետքերը տակաւին չեն ջնջուած եւ հին ցաւերուն վրայ նորերը աւելցած են»: Եւ հարց կու տայ Պիւլ. «Ինչպէ՞ս կարելի է դիմակալել այս բոլորը»:

Աննա Պիւլ հաւատաց, թէ հայը պէտք է յաղթահարէ իր ցաւը, հաւաքականութեան մէջ պէտք է վերագտնէ իր արժէքը: Բայց մանաւանդ ան հաւատաց, թէ հայը պէտք է գտնէ կեանքին նկատմամբ «սէրը» ու «յաղթահարէ իր կեանքը խորտակած աւելութիւնը»:

Աննա Պիւլ Հալէպի մէջ շարունակեց իր նուիրական աշխատանքը մինչեւ 1940-ական թուականները, երբ սկսաւ ներգաղթը դէպի Խորհրդային Հայաստան: Շատեր մեկնեցան եւ սկսան պատրաստուիլ մեկնելու: Աննա Պիւլ ուզեց միանալ իրենց: Կ'ուզէր երթալ իր «զաւակներուն» հետ՝ դէպի հայրենիք: Վերջապէս եւ ինչպէս ինք ալ կը վկայէ՝ «Իմ հայկական սիրտը» չէր կրնար հեռու մնալ իրենցմէ: Բայց խորհրդային համակարգը չէր կրնար արտօնել Աննա Հետուիկ Պիւլի նման «գործիչ»-ներ ընդունիլ: Հալէպ մնաց մինչեւ 1951 թուական: Եւ երբ Հալէպն ու հայկական գաղութը դարձան «ինքնաբաւ» եւ «բարւոք», Աննա Պիւլ որոշեց վերադառնալ տուն: Չէր կրնար վերադառնալ իր ծննդավայրը՝ Էսթոնիա, քանի որ անիկա ալ միացած էր համայնավար համակարգին: Անցաւ Գերմանիա եւ մնաց յատուկ պատսպարանի մը մէջ՝ մինչեւ իր մահը՝ 1981-ին:

Եւ դարձեալ Արտեմն է խօսողը: «Այսպիսի նուիրական կեանք մը՝ մեր Մեծ եղեռնին համար նուիրուած, կարելի չէ շահարկել: Կ'ուզեմ մեր այս ցաւը Արեւմուտքին ցոյց տալ՝ իրենց տեսադաշտէն մեկնելով: Թէ ինչպէ՞ս եւրոպացի Աննա Պիւլ որոշեց իր կեանքը նուիրել հայ ժողովուրդին եւ իր տառապանքներուն»:

Ռազմիկ Իվանեան ատենապետն է Հայկական ազգային միութեան: «Որոշած ենք յուշակոթող մը զետեղել Հաապսալու քաղաքին կեդրոնական մէկ տեղը: Տեղը եւ կոթողը պատրաստ են: Կը սպասենք հայկական-էսթոնական միջպետական կարգաւորումներուն:

Բայց կայ տակաւին աւելին: Էսթոնիոյ հայ գաղութը, առ ի երախտագիտութիւն հայ ժողովուրդին համար Աննա Պիւլի երկար տարիներու նուիրական կեանքին, տասնհինգ հիւանդ երեխայ կը պատսպարէ Հաապսալուի կազդուրման մէկ կեդրոնին մէջ՝ իր յիշատակին:

Աննա Պիւլ Գերմանիոյ պատսպարանի իր սենեակին մէջ կ'ապրէր իր անցեալի յուշերով, բայց նաեւ նամակագրութեամբ: Իր «երեխաներէն» շատեր հասած էին լաւ ասպարէզներու եւ մասնագիտութեան: Կը նամակակցէր անոնց հետ, եւ իր «զաւակներ»-ը չէին կրնար մոռնալ «Պիւլ մայրիկը»,

Շար.ը էջ 18

# ՄՏԱՒՈՐԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՏԻՐՈՂ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԷՄ

Ողջոյն Ձեզ Ոսկան Եղբայր,

Տխուր լուրեր ունիմ: Այսօր ինծի կանչած էին Հայաստանի ոստիկանութեան գլխաւոր վարչութիւն, որովհետեւ Էջմիածնի կաթողիկոսարանը զիս մատնած է ոստիկաններու ձեռքը ամբաստանագրով՝ որպէս թէ ես այլեւս հոգեւորական չեմ, բանի որ կաթողիկոսը այդպէս վճռած է, ուստի հանրութեան առաջ իմ՝ որպէս հոգեւորականի գործունէութիւնը կը դիտուի իբր խարդախութիւն, խաբէութիւն եւ ես այդկերպ որպէս թէ կը մոլորեցնեմ հայ ազգը: Ինծի գլխաւոր ոստիկանն ըսաւ, որ եթէ շարունակեմ նոյն ընթացքը՝ կրելով իմ համազգեստը եւ հոգեւոր տիտղոսը, ուրեմն զիս պիտի նկատեն որպէս քրէական յանցագործ եւ քրէական պատասխանատուութեան ենթարկեն զիս:

Սիրով եւ աղօթիւք՝
Հ. Եղիա ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ասո՞նք են քրիստոնէական սիրոյ, ներողամտութեան եւ խաղաղութեան քարոզիչները: Ասո՞նք են Յիսուսի պատգամներուն հետեւորդները, Անոր վարդապետութեան առաքեալներն ու աշակերտները: Երբեմնի խաչահանուն քահանայապետերու, դպիրներու, փարիսեցիներու փոխարէն, ահաւասիկ, ժամանակակից էջմիածնականներուն իսկական պատկերը: Սարսափելին ԵՐԵՒՈՅԹՆ է, ստեղծումը վախի, բռնութեան, ֆիզիքական եւ հոգեկան կաշկանդումներու սպառնալից մթնոլորտին, որ հետզհետէ շատ աւելի կ'ամրագրուի եկեղեցի եւ պետութիւն սերտաճումով: Կարծէք ստալինեան բռնաճնշումներու ժամանակաշրջանին մէջ գտնուինք, կուլակներու կամ Հիթլերներու, Կէօպէլսներու, Հիմմլէրներու եւ Այխմաններու ստեղծած համակեդրոնացման ջամբարներու կործանարար միջավայրին մէջ: Այս երեւոյթը մեզի չի՞ յիշեցներ բռնի տեղահանումներն ու մահու ախորժները ցեղասպան ու արիւնոտ ձեռքերովը Թալէաթներուն, Էնվերներուն եւ Ջեմալներուն:

Ցաւօք, պատմական վերոյիշեալ դէմքերէն ընտիր նմոյշ մը անմիջապէս մեր կողքը ունինք:

Սիրելի Բարեկամներ,

Առկից ձեր ուշադրութեան կը փոխանցեմ ընտիր մտաւորականի մը յօդուածը վերջին «կարգալուծումներու» առնչութեամբ: Ծանր մեղքը կայսերամոլական ախտով վարակուած ապարանցի կաթողիկոսինը չէ միայն, այլ այն բոլոր հայ մարդոց, որոնք անտարբերութեամբ կը դիտեն մեր եկեղեցիին մէջ իրագործուող այս հոգեւոր եղեռնը:

Առարկութիւն չեմ ըներ, եթէ սփիւռքահայ մեր մամուլը կ'ուզէ անփառունակ կաթողիկոսը գովաբանող Մայր Աթոռէն եկած հաղորդագրութիւններուն լայն տեղ տրամադրել իր սիւնակներուն մէջ: Նոյն մամուլը սակայն պարտի բարոյական կեցուածք ցուցաբերել քաջութեամբ անդրադառնալով նաեւ իրողութիւններու, որոնց մասին կը խօսի սոյնին հետ առկից յօդուածը:

Մարդիկ բռնակալներ չեն ծնիր, այլ կը դառնան, որովհետեւ հասարակութեան մէջ կը պակսին քաղաքացիական քաջութիւն ցուցաբերող անհատներ, որոնք ատենին այսպիսի կայսերամոլական ախտով վարակուած բռնակալներու անսանձ քմահաճութիւններուն "ՈՉ" ըսել գիտեն:

Բարեկամական ջերմ ողջունիւ՝
Աբէլ Քհնյ. Մանուկեան

***ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆԴԱՍԱՐԵԱՆ***

*Ինչպէս յայտնի է մամուլի հրապարակումներից, Ապրիլի 28-ին, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական խորհրդի խնդրանքին ընդառաջ, Գարեգին Բ կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ «կարգալոյծ է հռչակուել Տ. Մարտիրոս քահանայ Բերբերեանը եկեղեցականին անյարիր ընթացքի համար»: Այս առիթով հասարակական լայն հնչեղութիւն ստացած ապօրինի կարգալուծութիւնների թեման գնալով ընդարձակւում է, եւ բացայայտւում են անհիմն «կարգալուծութիւնների» իրական պատճառներն ու այլ մանրամասներ: Համատարած բողոքի ու ընդվզումի ալիքին միացել է նաեւ Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանի գիտաշխատող, կրօնագիտական եւ աստուածաբանական գրքերի հեղինակ Արամ դպիր Դիլանեանը, ով ակտիւ քննարկումներ է ծաւալում իր ֆէյսբուքեան էջում:*

*Տէր Մարտիրոսի հետ պատահած դէպքերի վերաբերեալ նա մասնաւորապէս գրում է. «Այս կարգալուծութիւնը անպատւութիւն չէ հոգեւորականի համար, քանի որ հոգեւորականի պատիւը որոշւում է իր հօտի եւ հաւատացեալների վերաբերմունքով: Զանազան աղօթքների խմբեր կան, եկեղեցական միութիւններ, համայնքներ, կենտրոններ եւ այլն, վերջապէս այդ ամէնը ծառայելո՞ւ են իրենց նպատակին, թէ՞ ձեւի համար են: Ահա կարգալոյծ են արել անարծաթ քահանայի, միշտ բողոքել էք, որ քահանան փող է վերցնում, ահա քահանայ, որ փող չի վերցրել, եւ նրան կարգալոյծ են արել, շարունակելո՞ւ էք ձեր կառոյցներում նիստեր անել, թէ՞ վերջապէս բարձրացնելու էք ձեր ձայնը: Եթէ լռելու էք, լռէք յաւիտեան, եւ այլեւս չխօսէք. ես ձեզ չեմ վստահում:*

*Ուղղակի շնորհակալութիւն յայտնենք տէր հօրը, որ կատարեց իր պարտքը, իր կարողութեան չափով եւ դեռ աւելին, եւ յուսանք, որ մեր Եկեղեցու համար էլ մի օր լոյս կը բացուի: Իսկ բոլոր նրանք, ովքեր գերադասում են լռել կամ վերադասի աչքին լաւ երեւալ, ասեմ, որ վերադասը երբեք էլ ձեզ չի գնահատի:*

*Այն, որ տէր հայրը ծառայութեան համար դրամ չի վերցրել, դա արդէն նշանակում է, որ նա բացախօս է եղել մինչեւ կարգալոյծ լինելը: Ուրիշ ի՞նչ կերպ պէտք է արտայայտուէր նրա բացախօսութիւնը. մի՞թէ պէտք է խայտառակէր Եկեղեցին, որպէսզի բացախօս երեւար: Մարդը ծառայել է՝ իր հնարաւորութիւններից աւելին անելով:*

*Փորձէ՛ք դուք ձեր հիմնական աշխատանքից յետոյ գնալ տարբեր տեղեր եւ զանազան ծառայութիւններ մատուցել: Տէր Մարտիրոսը կամայ թէ ակամայ մի հարց է բարձրացրել Հայ Եկեղեցու հոգեւոր դասի եւ աշխարհականների առջեւ, թէ ինչպէ՞ս պէտք է քահանան հոգ տանի իր ընտանիքի համար:*

*Յայտնի է, որ հայ քահանան աշխատավարձ չի ստանում եւ թողնուած է համայնքի յոյսին: Տեղեր կան, որտեղ իրական հոգեւոր համայնքներ չկան, ասեմ աւելին՝ ժողովուրդը ուղղակի կապ չունի Եկեղեցու հետ. վխտում են աղանդաւորները, գերիշխող է աթեիստական հայեացքները, իսկ հոգեւոր խորհուրդները՝ մկրտութիւն, թաղում եւ այն, դիտարկւում են որպէս ազգային սովորութիւններ: Այդպիսի համայնքում յայտնուած քահանան կա՛մ սովի պէտք է մատնի իր ընտանիքը, կա՛մ պէտք է այս ու այն կողմ գնայ եւ ինչ-որ բան հայթայթի:*

*Ճիշտ կը լինի, եթէ աշխատավարձ սահմանեն քահանային, խելամիտ սահմաններում, որպէսզի քահանան զբաղուի միայն հոգեւոր ծառայութեամբ: Եթէ ծանր է այսօր ֆինանսական իրավիճակը, ապա կարելի է այլ բաներ մտածել, օրինակ.*

*1. Որեւէ հարուստ համայնք իր վրայ վերցնի Հայաստանի հեռաւոր գիւղերում ծառայութեան անցած հոգեւորականի հոգսերը եւ ամսական մի գումար փոխանցի ուղղակի այդ քահանային, ԱՌԱՆՑ միջնորդի:*

*2. Երեւանում ծառայող քահանաները իրենց հասոյթից մաս յատկացնեն նման քահանաների համար:*

*3. Փորձառու քահանաները, որոնց ընտանեկան հոգսերը նուազել են, եւ իրենք բաւարարւում են միայն մի կտոր հացով, թող մեկնեն հեռաւոր գիւղեր՝ հոգեւոր առաքելութեամբ:*

*4. Բացել խմբակներ, որտեղ ծանր վիճակում յայտնուած քահանաները կը կարողանան ներկայացնել իրենց խնդիրները եւ ստանալ համապատասխան օժանդակութիւն: Յիշեցնում եմ, որ քահանաները չունեն հրեշտակային բնութիւն, այսինքն՝ մարդ են եւ ուտել է պէտք, չնայած որ ունեն հրեշտակային առաքելութիւն. այն է՝ քարոզել մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւետարանը:*

*Տէր Մարտիրոսը ընտրել է անարծաթ քահանայութեան ճանապարհը, եւ ես անձամբ ողջունում եմ այդ քայլը: Ուրախ կը լինեմ, եթէ նրա օրինակին հետեւեն միւս քահանաները եւս, ովքեր կարող են, քանի որ այսօր միայն այդ ճանապարհով է հնարաւոր քարոզել մեր Տիրոջ Աւետարանը հայ ժողովրդի մէջ: Որոշել էի չգրել, որովհետեւ մարդկանց չի հետաքրքրում Եկեղեցում կատարուածները, ինչպես մի ռաբիզ երգում է ասւում. «Ինչպես ուռին ու բարդին, ամէն մարդ իր դարդին»: Բայց մինչեւ ե՞րբ:*

*Մարդիկ իրենց ճամպրուկներն են պատրաստում, որ լքեն երկիրը, ի՞նչ Եկեղեցի, ի՞նչ կարգալոյծ, որեւէ մէկին չի հետաքրքրում»: Իսկ ահա աւելի վաղ իր ֆէյսբուքեան գրառումներում Մատենադարանի գիտաշխատողը նոյնպիսի մի բողոք էր յայտնել նաեւ կաթողիկոսի եւ իր շրջապատի հերթական զոհերից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախկին միաբան Եղիա աբեղայ Խաչատրեանի առնչութեամբ. «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի՝ Դեկտեմբերի 12-ի հայրապետական տնօրինութեամբ «կարգալոյծ է հռչակուել Տ. Եղիա աբեղայ Խաչատրեանը՝ ուխտազանցութեան եւ եկեղեցականին անյարիր ընթացքի համար», տեղեկացնում է Մայր Աթոռի լրատուական ծառայութիւնը:*

*Կարո՞ղ էք վկայել, պարոնայք «լրատուական ծառայութեան» պատասխանատուներ, թէ ինչո՞ւմ է կայանում հայր սուրբի «եկեղեցականին անյարիր ընթացք»-ը եւ «ուխտազանցութիւնը»: Ես շատ ցաւում եմ ձեզ համար, որովհետեւ դուք ոչինչ ասել չէք կարող, բացի կրկնելուց այն, ինձ ձեզ յանձնարարուած է ասել: Տեսնես, թէ ի՞նչ էք ասելու Դատաստանի օրը, երբ ամբողջ աշխարհը ձեզ նայի: Բոլորս էլ մեղաւոր ենք, բայց դուք նաեւ ուրիշի մեղքերն էք վերցնում ձեզ վրայ:*

*Ցաւում եմ ձեզ համար, եւ բոլոր նրանց համար, ում ուրախացրել է այս լուրը, նաեւ նրանց համար, ովքեր չեն կարող ազատ արտայայտուել, ընդվզել, բողոքել, որովհետեւ վախենում են կարգալոյծ լինելուց: Շարունակէ՛ք վախենալ. դա այն է, ինչ կարող էք անել այսօր: Եթէ հայր Եղիան իրապէս մեղաւոր է, ապա պէտք է կարգապահական տոյժի ենթարկել նաեւ վանքի վանահօրը, նրա խոստովանահօրը, ձեռնադրող եպիսկոպոսին, ինչպէս նաեւ մի շարք միաբանների, ովքեր իմանալով հանդերձ նրա մեղքերը՝ մինչ այսօր լռել են:*

*Ինչպէս նաեւ հոգեւոր խորհուրդ պէտք է գումարուի այս հարցով եւ այլն: Շատ դժուար է անմիջապէս տեսնել սեփական բացթողումները: Կարծում եմ, որ մեր այս բազմախօսութիւնն էլ իր հետեւանքները կ'ունենայ, եւ որոշ մարդիկ, ինչպէս նաեւ ես, կ'անենք լուրջ եզրակացութիւններ: Երբ ես աշխատում էի ինժիներ, մեզ տրուած էր սխալուելու իրաւունք, եւ իմ սխալների համար պատասխան էր տալիս իմ անմիջական ղեկավարը:*

*Կարծում եմ, որ հոգեւորականի եւ հօտի կեանքն ու փրկութիւնը շատ աւելի թանկ են, քան այն սարքերը, որոնք ես կարող էի այրել իմ տգիտութեան պատճառով: Այդ իսկ պատճառով, երիտասարդ հոգեւորականների սխալներին եւս պէտք է ներողամտութեամբ մօտենալ, եթէ կան, իսկ հոգեւոր վերնախաւը, այսինքն՝ մեր եպիսկոպոսները, պէտք է սուգ անեն կատարուածի համար: Ես մի քանի հարցեր ունեմ հայր Եղիայի կարգալուծութեան որոշումը պաշտօնապէս յայտարարելու առնչութեամբ.*

*1. Եթէ կարգալոյծի որոշումը կայացուել է Դեկտեմբերի 12-ին, ապա ինչո՞ւ է հաղորդագրութիւնը 4 օր ուշացումով հրապարակւում: Ինձ հետաքրքիր է, թէ ի՞նչ է կատարուել այդ 4 օրերի ընթացքում: Կարող եմ ասել, որ Դեկտեմբերի 14-ին՝ շաբաթ օրը, հայր սուրբը եղել է Մատենադարանում, մենք մօտ 3 ժամ զրուցել ենք աստուածաբանական եւ քրիստոսաբանական հարցերի շուրջ, հանդիպել ենք որոշ մարդկանց, եւ այդ օր նա իր կարգալոյծի մասին տեղեակ չի եղել: Մատենադարա-*

*Շար.ը էջ 17*

# ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ

## «Հրճուանքը հոգւոյս որ դուստրս կոչեցի Նայիրի, Ան ալ իր կարգին զիս կոչեց՝ Իմ ԿԱՅԼԱԿ»

*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*



Այսպէս ծնաւ Կայլակ անունը, երբ 12-ամեայ ամերիկածին դուստր Նայիրին, ընթերցելով հօր Մկօ Փանոսեանի ստեղծագործութիւնները՝ գինք նմանցուց անապատի մոլորած մարդոց պապակը յագեցնող ջուրի կայլակին:

Եւ ծնաւ Կայլակը..... Այո, ծնաւ որպէսզի աշխարհի տարածքին, աշխարհացրիւ հայ մարդու պապակած հոգին ու սիրտը կայլակ մը մեսրոպաշունչ երգով զովացնէ ու միտքը՝ կայլակ մը երկով հագեցնէ:

Կայլակ... այդ մէկ շիթ ջուրին մէջ ամփոփուած է զգայուն հոգին երիտասարդ բանաստեղծ՝ Մկօ Փանոսեանին, որ ծնած է Լիբանանի հայաշատ գաղութին մէջ, նախնական ուսումը ստացած է Գարակէօզեան ապա Սուրէն Խանամիրեան Ազգային Վարժարաններէն ներս, մշակուած է ազգային դաստիարակութիւն ջամբող հայրենաւանդ ուսուցիչներու, յատկապէս Շաքէ Եագուպեանի, շունչով, լիցքաւորուած՝ հայ գրականութեան դասականներով եւ ներշնչուած՝ հայրենասիրութեամբ, հայոց լեզուի պաշտամունքով եւ հայ ժողովուրդի հանդէպ հաւատարմութեամբ: Անոր դիւրազգաց հոգին միշտ ալ մերժած է մարդկային կեանքի մէջ տիրող անիրաւութիւնները, խռոված է միտքը ու իր մէջ կուտակած է հայ ժողովուրդի հանդէպ եղած անարդարութեան դէմ բողոք ու բարկութիւն: Ի վերջոյ նախակրթարանի աշակերտ՝ պատանի Մկոն իր գայրոյթը դրսեւորած է գրելով երկարաշունչ բանաստեղծութիւն մը, »Մեծ Եղեռն« խորագրով, որ օրին հրատարակուած է »Ազդակ« Օրաթերթի մէջ, իսկ բանաւոր իր ձայնը լսելի դարձուցած է մեծ ապրումով ասմունքելով նոյն բանաստեղծութիւնը, հայոց Ցեղասպանութեան առթիւ կազմակեպուած պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին, ապշեցնելով հազարաւոր ներկաներու:

Այդ եղաւ մեկնակէտը Մկօ Փանոսեանին, վաղուան Կայլակին, հազիւ տասնամեակ մը բոլորած Մկոն իր առաջին քայլերը կը նետէր գրականութեան անդաստանէն ներս, որպէս ապագայի խոստմնալից բանաստեղծ. եւ այսպիսով ուսուցիչներու եւ շրջապատի քաջալերանքով յաճախակի կը դառնար Ազդակի էջերուն վրայ անոր անունի երեւումը:

Սակայն Հայու ճակատագիրը ամէն տեղ եւ ամենուր նոյնն է, կը հալածէ հայորդիները: Ութսունական թուականներուն զոհը լիբանանահայութիւնն էր, Լիբանանի քաղաքական աննպաստ պայմանները պարտադրած էին Փանոսեան ընտանիքը գաղթականութեան ցուպը ձեռք առնելով ճամբայ իյնալու դէպի հեռաւոր Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

Երիտասարդ ընտանիքը, նոր աշխարհի մէջ իր հինգ զաւակներու ապրուստը հոգալու նախանձախնդրութեամբ՝ լծուեցաւ աշխատանքի, մեր փոքրիկ բանաստեղծը կորսնցուցած էր իր ներշնչարան՝ հայկական վարժարանը, իր հոգատար ուսուցիչները, հայկական գաղութի հայաբոյր մթնոլորտը եւ ինքզինք գտած այլազան ազգութիւններով շրջապատուած խառն շրջապատի մը մէջ: Բայց արդէն երիտասարդութեան սեմին եղող Մկոն շատ արագ յարմարեցաւ այս նոր աշխարհին, որովհետեւ գտած էր իր ներշնչարարանը, այս անգամ հայկական եկեղեցւոյ խնկաբոյր արարատղներուն ներքեւ, անոր սիրով գեղուն հոգին հիմա սկսէր էր իր մէջ աճեցնել Աստուծոյ հանդէպ, մանկութենէն իսկ ունեցած, յատուկ սէրն ու յարգանքը՝ դարձնելով զայն ներշնչման նոր աղբիւր: Ջլատիչ ճիգով վանելով իրմէ օտարամուտ հոսանքներն ու ճնշումները, միշտ տեղի տալով բարիի, հայրենիքի, հայոց լեզուի եւ Աստծոյ հանդէպ տածած սիրոյ զգացումին:

«Եկեղեցին մեր խոնարհ, պատգա՛մն է տիեզերքի,

Ուր դրոշմեց տէր Աստուած, ճակատագիրը հայի:

Իրմով էր ներշնչուած այբուբենը Մաշտոցի,

Զոր կոչեց Այբն Արարիչ, իսկ Քէն՝ Քրիստոս կենսալի,

Եւ պահեց բարձրաքրոիչ, ազգ, մշակոյթ ու ոգի:»

Մկոյի հոգեկան ապրումները այնքան մաքուր այնքան քնքուշ եւ ինքնատուր էին, որ գրիչը յաջողեցաւ այս օտար ափերուն եւս արտահոսել հոգիին խռովքը, մտքին մէջ ամբարուած բառերով անոնք մարմին առին, նախ որպէս հայրենասիրական երգեր, ապա քնարաշունչ բանաստեղծական թռիչքով խօսքեր, որոնք հայ երգիչներու ինչպէս՝ Սալբի Քէլէշեանի, Գառնիկ Սարգիսեանի, Անթուան Պէզճեանի, Քրիստափոր Արապեանի, Ժոզէֆ Գրիգորեանի, Սեդրակ Օվիկեանի, Արա Շահպազեանի, Շիրազ Եղիազարեանի, Սահակ Սիսլեանի, Աւօ Նաճարեանի եւ Գուրգէնի Թովիչ շունչին տակ վերածուեցան մօտաւորապէս 50 սքանչելի երգերու, խանդավառեցին եւ խրախուսեցին հայ մարդը զանազան առիթներով եւ դարձան ժողովուրդի սեփականութիւնը:

Այսպիսով հայոց աշխարհի իւրաքանչիւր դէպք, յաղթանակ թէ ընկրկում, նուաճում թէ նահանջ երիտասարդ Մկոյի հոգեմտաւոր աշխարհը կը սարսէր իր ընթերքէն եւ միտքը կ'ենթարկէր ահազանգի, մանկութենէն անթեղած մեսրոպաշունչ բառերը իր մտածումներուն թռիչք կու տային եւ բառերուն ձեւ, ու երկունքի ցաւերով կ'երկնէր բանաստեծութիւնը միաժամանակ կը մարմնաւորուէր բանաստեղծը:

Այսպիսով Մկօ Փանոսեան իր երախայրիք՝ »Սէր ու Կրակ«-ով 2013-ին յաղթական մուտք գործեց հայ գրականութեան անդաստանէն ներս որպէս՝ Կայլակ:

Շար.ը էջ 19

# ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՆ ՄԵԿ ՕՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*

Մեր սկիզբն ու աւարտը, մանկութիւնից ծերութիւն ապրուող կեանքը իւրաքանչիւրիս համար ճանապարհի անկրկնելի փորձութիւն է, որի յաջողութեան կամ անյաջողութեան պատճառը մեր սեփական գործողութիւնները, մտածողութիւնը, մեր մտքերն են, որքան էլ դրանք պայմանաւորուած լինեն միջավայրի, այլոց հետ ունեցած մեր յարաբերութիւններով: Կեանքի հաշուեմատեանը մեր պարտաւորութիւնների ու պատասխանատւութիւնների իրաւացի արձագանքն է այնուամենայնիւ, որքան էլ չուզենանք ընդունել կամ դեռ հասու չլինենք դրան:

Պարզ լաւատեսութիւնը ոչինչ կամ ինքնախաբկանք է, եթէ գործուն միջամտութեան ազդեցութիւնը բացակայ է.- մեր հայեացքի կամ որեւէ այլ իրականութեանը, նոյնքանով ոչ միայն մխիթարական, այլեւ անհրաժեշտ է: Եւ որքան մեծ է պետական, հանրային ուշադրութիւնը այսպիսի հաստատութիւնների նկատմամբ, այդքան աւելի բարձր է տուեալ հանրութեան բարոյական նկարագիրը:

Վանաձորի «Գէորգ եւ Սիրվարդ Գարամանուկ» տարեցների տունը իր հարկի ներքոյ տարիներ շարունակ օթեւանել է առաջացած տարիքում մենակ մնացած հարիւրաւոր մարդկանց, ներկայում 41 տարեցներ յանձնուած են այս հաստատութեան խնամքին: Նրանք թէեւ զոհ են տեղի սոցիալական պայմաններից, ապրուստից, աշխատակիցների վերաբերմունքից, անգամ իրենց լքած զաւակներից, որոնք տարբեր պատճառներով, գուցէ նաեւ կեանքի ինչ-ինչ պայմաններով պարտադրուած ծնողներին



ներքոյ հանրային կեանքը, մարդկային յարաբերութիւնները կորցնում են իրենց նախկին չափանիշները, արժէքները.-անտարբերութիւնը սողոսկում է ներս այնպէս անառարկելիօրէն, որ սոցիումի քայքայման պատճառներից ամենահիմնականը կարելի է դիտել, երբ մարդը հեռանում է կարեկցանքի՝ իրեն մենաշնորհուած զգացումից:

Մանկութիւն եւ ծերութիւն՝ կարելի՞ է արդեօք զուգահեռ անցկացնել այս երկուսի միջեւ. - եթէ դրանք որպէս մարդու կեանքի ամենաանպաշտպան վիճակները դիտելու լինենք, իհարկէ՝ այո: Մանկատուն եւ ծերանոց, սրանք նոյնպէս զուգահեռւում են, եթէ նկատելու լինենք տեղի բնակիչների իրական վիճակն ու հոգու ամենախոր ապրումը՝ լքուածութիւնը ամենամերձաւորից՝ մի դէպքում ծնողից, միւսում՝ զաւակից: (Միայն եթէ առաջինը դեռ սկիզբն է եւ ամբողջ մի կեանք ունի առջեւում պահած, միւսը աւարտն է, հոգու կրած վերջին ցաւը, յուսախաբութիւնը):

Այնպէս որ մանկատների ու ծերանոցների գոյութիւնը որքանով տխուր կամ անյարիր է մեր թողել են օտարների խնամքին, միեւնոյն է բոլորի հայեացքում նոյն տխրութիւնը կը տեսնես՝ ծերունական անյուսութեան հետ միախառնուած լքուածութեան դաժան զգացումը, ինչն արձանագրել են կանանց միամսեակի աւարտին Վանաձորի տարեցների տուն՝ Ստեփանավանի մշակոյթի պալատի տնօրէնութեան կազմակերպած այցը լուսաբանած տեղի հեռուստակայանների տեսախցիկները (ինձ մնում էր հեռակայ կարդալ այդ հայեացքները...): Ինչպէս նախորդ շրջանում, փաստօրէն արդէն աւանդոյթ դարձրած եւ իրենց մշակոյթի պալատի գործունէութեան մաս կազմած այս ծրագրով տնօրէնութիւնը եւ աշխատակիցները նպատակ ունեն հանրային ուշադրութիւնը ուղղել անապահով խաւերին, աւելի շուտ կարեւորել մեզանում աստիճանաբար պակասող գթասրտութեան զգացումը, յատկապէս այն մարդկանց նկատմամբ, ում կեանքը հարուածել է:

Նուէրները կամ սննդամթերքը՝ Ստեփանավանի քաղաքապետ Միքայէլ Ղարաքեշիշեանի կողմից

Շար.ը էջ 17

## «ԷՋԵՐ՝ ԿԵԱՆՔԷՍ ԵՒ ՄՏՔԷՍ»

*Շարունակուած էջ 13-էն*

էն, նոյնպէս «Կրօնապաշտ Աւերագործները», ուր գրողը ծանր շեշտով կը դատապարտէ կրօնապաշտ փոքրամասնութիւնները, որոնք կը խանգարեն հանգիստը աշխարհին: «Հայուն ծնունդը՝ Ծնունդն է Հայուն»: «Ամանորի մաղթանքները»: «Ուր է վրիժառու հայը», փնտռտուք մըն է, վրիժառու հայու մը «Որ դառնայ Սաֆարովը հալածող շուքը» եւ «Սփիւռքին խօսիլ Սփիւռքի լեզուով» ուր հեղինակը իր ընդվզումը կը յայտնէ, դիտել տալով, որ «Սփիւռքահայութիւնը միայն նիւթապէս Հայաստանի օգտակար ըլլալու ծառայող պէտք չէ նկատուի, այլ ան պէտք է ըլլայ մասնակից հայրենի իշխանութեան՝ իր մարդուժի եւ գաղափարներու ներդրումով», եւ վերջապէս, «Մանտելան՝ որ քրիստոսավայել ներել գիտցաւ»: Դաւիթեան, անդրադառնալով Մանտելայի ներողամտութեան շնորհիւ, իր երկրին համար ձեռք ձգած քաղաքական յաջողութիւններուն եւ Հայոց Ցեղասպանութեան հետ բացուող զուգահեռին՝ կը խորհրդածէ. «Արեւմուտքի կողմէ դարձուող աշխարհը կ'ակնկալէ ու կը սպասէ որ հայն ալ ներող ըլլայ, բայց մենք «քրիստոսավայել» մեր կենցաղով անցեալին շատ բան տուած ենք աշխարհին եւ այդպէսով մեր տկարութեան պարտքը շատոնց վճարած ենք»:

## ՄՏԱՒՈՐԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՏԻՐՈՂ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԷՄ

*Շարունակուած էջ 15-էն*

նում նրան շատերն են տեսել, եւ կարծում եմ, բոլորն էլ կարող են վկայել, որ կարգալոյծ արուածի տեսք չունէր:

2. Եթէ չեմ սխալւում, հայր սուրբը իր բաց նամակը գրել էր Օգոստոս ամսին, յամենայն դէպս, եպիսկոպոսական ժողովից շատ առաջ, իսկ նրան կարգազուրկ են անում Դեկտեմբերի 12-ն: Ի՞նչ է, նամակը նո՞ր կարդացին: (Ցիշեալ վճիռը տեղի ունեցաւ Արսէն արք. Բերբերեանի մահուան եօթնօրէքի կարգը կատարելուց յետոյ, քանի որ նա, որպէս Կարգապահական յանձնախմբի ատենապետ, հայր Եղիայի միակ պաշտպանն էր Մայր Աթոռում):

3. Ցայտնի է նաեւ, որ հայր սուրբը գտնուել է պատժաշրջանում. Որեւէ մէկը զեկոյց ներկայացրե՞լ է, թէ ինչպէս է անցել պատժաշրջանը:

4. Կարո՞ղ ենք արդեօք տեսնել «կարգապահական յանձնախմբի» կազմած արձանագրութիւնները՝ աբեղայի կարգալոյծի հարցի կապակցութեամբ: Որեւէ մէկը կարո՞ղ է այն հրատարակել: Հետաքրքիր է նաեւ յանձնախմբի կազմը եւ նրանց օրակարգը: Հարկ է տեսնել նաեւ նիստի արձանագրութիւնները եւ կայացած որոշման փաստաթուղթը, ինչպէս նաեւ կաթողիկոսի հրամանը՝ ստորագրութեամբ հանդերձ: Հակառակ դէպքում տեղեկատուական բաժնի յայտարարութիւնը մնում է օդի մէջ:

Այսինքն՝ քանի դեռ այդ փաստաթղթերը հրապարակուած չեն, կարգալոյծը ուժի մէջ չէ: Խօսքը վերաբերում է Սեպտեմբերի 2-ին կայացած նիստի արձանագրու-թիւններին: Իսկ եթէ կաթողիկոսը այդ օրը եղել է Փարիզում, ապա ե՞րբ է ստորագրել հրամանը:

Եթէ Դեկտեմբերի 12-ին կաթողիկոսը եղել է Փարիզում, ապա այդ օր նա չէր կարող ստորագրել հրամանագիրը: Ստացւում է՝ հրամանագիրը ստորագրել է մէկ ուրիշ օր, եւոին թուահամարով (այսինքն՝ հայր Եղիայի վերջին՝ Դեկտեմբեր 15-ի թուակիր նամակի յաջորդ օրը՝ Դեկտեմբեր 16-ին): Այսինքն՝ հրամանը անվաւեր է:

Եթէ մենք ապրէինք Արեւմուտքում, ապա այսպիսի «կարգալոյծը» դատարանը անվաւեր կը համարէր, քանի որ հայր սուրբին չեն տուել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որը պէտք է անէին նոյն օրը: Ի վերջոյ, եթէ նիստերի արձանագրութիւնների եւ սղագրութիւնների հարցերը կարգաւորուի, ապա այդքան էլ հեշտ չի լինի կարգալոյծ անել: Ես համոզուած եմ, որ սա վերջին կարգալոյծը չէ, եւ սրանով մենք պէտք է կանխենք առաջիկայ կարգալոյծները, թէ չէ մի օր քահանայ չենք ունենայ, որ Պատարագ մատուցի: Մենք ունենք քահանաներ, որ չունեն քարոզելու շնորհ, իսկ հայր սուրբը ունի նաեւ գործուն միտք: Ես նրա համար չեմ անհանգստանում, այլ՝ ձեզ համար, որ ինքներդ չէք կարողանում, սակայն արգելում էք նրան, ով կարողանում է:

Ֆէյսպուքում շատ հոգեւորականներ կան, նաեւ եկեղեցական միութեան անդամներ, բայց երբ բանը հասնում է լուրջ արտայայտուելուն, բոլորը լռում են: Մեր հոգեւորականների մի մասը միայն իրենց նկարներն են դնում Ֆէյսպուքում եւ ակնկալում են «հաւանումներ» (like) ստանալ:

Ես ձեզանից ոչ մէկին էլ չեմ տալու իմ «հաւանումները», ինձանից յոյս չունենաք: Իրավիճակը կարելի կը լինի փոխել, եթէ միաբանները հաւաքուեն եւ բողոքեն, կամ էլ եպիսկոպոսները արտայայտեն իրենց անհամաձայնութիւնը, բայց չեն ուզում իրենց գլուխը դնել ցաւի տակ: Մի՞թէ Ֆրանսա մեկնելը ինչ-որ արտառոց բան է, որի համար պէտք է բերանդ փակ ման գաս: Իսկ Մայր Աթոռի փողերը ո՞ւմ փողերն են, մի՞թէ ազգից չեն հաւաքուել: Իսկ եթէ դուք գիտէք, թէ ինչ է կատարւում Մայր Աթոռում, ինչո՞ւ էք լռում, լուսաւորէ՛ք մեզ:

Ինձ Քանատայից գրեցին, որ իմ խօսքերից այնպիսի տպաւորութիւն է ստացւում, որ ես չեմ սիրում մեր կաթողիկոսին: Եթէ ասեմ. «Ո՛չ, սիրում եմ», ապա կեղծաւորութիւն կը լինի: Բայց ինձ թւում է, թէ ես ինչ-որ օգուտ տալիս եմ նրան՝ առարկելով որոշ հարցերում: Եթէ այսքան մեծ չափերի են հասել կարգալոյծերը, ապա կարելի է վերլուծութիւն անել, թէ ո՞րն է նման երեւոյթի պատճառը, ինչո՞ւ են մեր հոգեւորականները այդքան վատացել, որ հայրապետը ստիպուած դիմում է ամենածայրայեղ միջոցին: Այո՛, իրապէս, ամէն ինչ չէ, որ պէտք է ասուի, քանի որ Հայ Եկեղեցու հեղինակութեան հարցն է դրուած, սակայն երիտասարդ ու անփորձ հոգեւորականին եւս չի կարելի ջարդել: Բարի հովիւը մոլորուած գառնուկին վերադարձնում է հօտ, եւ ոչ թէ մորթում է եւ ուտում: Այս լուրը ինձ այնպէս ցնցեց, որ հազիւ եմ ինձ զսպում, որ չասեմ այն ամէնը, ինչ պէտք էր վաղուց ասել»:

## ԶՐՈՅՑ ՍԻՊԻԼ ԲԷՔԹՈՐՈՍՕՂԼՈՒԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 13-էն*

րապէս գեղեցիկ ձայնը ժառանգական բնոյթ ունի... Բացառութիւններ անշուշտ թէ կան... Խնդրեմ տուէք մեզի նշմարներ Սիպիլի մանկութեան, պատանեկութեան կեանքի ուրախ թէ տխուր պահերէն...

Սիպիլ. Մօրս ձայնը շատ գեղեցիկ է բայց մշակուած չէ... Հայրս միշտ երգչախումբի անդամ է: Լաւ ականջ ունի եւ լաւ chorist է...Ես հաւանաբար մօրմէս ժառանգած եմ ձայնս ...Իսկ Սիպիլը, կրնամ ըսել թէ երջանիկ մանկութիւն մը ունեցած է...միշտ ժպտուն եւ այնքա՜ն համերաշխ իր մէկ հատիկ քրոջ հետ...Եւ Սիպիլ մանկութիւնէն շատ կը սիրեր երգել: Սիրած հագուստները կը հագնէր, մազերը կը սանտրէր, մօրը կրունկով կօշիկները կը փորձէր եւ հայելիի դիմաց անցնելով...անուշահոտերու շիշերը բարձրախօսի պէս օգտագործելով կ'երգէր ու կ'երգէր անընդհատ: Մայրս երբ հիւրեր ունենար գիս քաջալերելու համար կ'ըսէր... «Սիպիլ աղուոր ձայնովդ հայերէն աղուոր երգ մը երգէ բարեկամուհիներուս...» Ես կը շիկնէի ...շատ կ'ամչնայի այդ շրջանին բայց մօրս «աղուոր» բառը գիս կը խթանէր... Գաղտագողի բազկաթոռին ետին կ'անցնէի ու վեհերոտ կը սկսէի երգել...Ցետոյ զարմանալի ձայնս ինքնին կը բարձրանար ... Ինքզինքս կը մոռնայի ...

Ցետոյ... յետոյ ... Բայց Սիպիլ յաղթահարեց իր ամաչկոտութիւնը...

Լիւսի. Սիրելի Սիպիլ դուք ձեր կատարողական բարձր ինքնութեան ոճով եւ բծախնդիր բնաւորութեամբ նուաճած էք հայ երգի ոմանց համար անհասանելի ոլորտները, առաջին անգամ ըլլալով, արդեօք կը մասնակցիք այսպիսի բարձրորակ երաժշտական Փառահեղ փառատօնի մը... Ձեր զգացումները եւ մտորումները...

Սիպիլ. Առաջին անգամ 2012 թուականին Մոսկուայի մէջ մասնակցեցայ Արմէնիա music Award եւ արժանացայ Magical Voice մրցանակին...Ցետոյ Հայաստանի երաժշտութեան մրցանակի հանդիսութեան եւ արժանացայ...

«Հայ երաժշտութիւնը Սփիւռքի մէջ ծանօթացնելու եւ պահպանելու առաքելութեան» յատուկ մրցանակին: Այս բոլորը արժէքաւոր փառատօներ էին ինծի համար: Բայց Գալիֆորնիոյ Palm Spring Փառատօնի մրցանակաբաշխութեան հրաւէրը յուզումնախառն հրճուանքով լեցուց սիրտս... Երաժշտական կեանքի մը դափնեպսակը ըլլալու հաւակնութիւններով լի է մթնոլորտը... Ծննդավայր Իսթանպուլի մէջ կատարումներս նոյնաչափ գնահատուած են Հայրենիքի մէջ: Այնքա՜ն երջանիկ կը զգամ...

## ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏԱՆ ՄԷԿ ՕՐԸ

*Շարունակուած էջ 16-էն*

տրամադրուած, իհարկէ ուրախութեան առիթ էին տարեցների տան բնակիչների համար, մշակոյթի պալատի ժողգործիքների եւ վոկալ համոյթների երգն ու պարը, անհատ կատարողների ամունքը նմանապէս, որ շատ արագ փոխեցին նրանց տրամադրութիւնը, սակայն ծերերի հանդէպ ուշադրութեան զգացումն էր, որ առանձնացրեց, տարբերեց այդ մէկ օրը միւսներից, երբ նրանք զգացին ջերմութեան ուրիշ շունչ, յատկապէս դպրոցականհասակ երեխաների կողմից, որոնք իրենց թոռները չէին իհարկէ, բայց այլեւս ինչ կարեւոր է դա, երբ բաժանման պահին ոմանք արտասւում էին...

Այցելուների ջերմ խօսքերն ու բարի արարքները փարատեցին մէկ օրուայ նրանց տխրութիւնը, կտրեցին միապաղաղ առօրեայից. բարի յիշողութիւն մնաց: «Մեր հոգու պարտքն է դա», այսպէս է մտածում տարեցների տան փոխտնօրէն Գայանէ Գէորգեանը: Եւ իսկապէս, ուշադրութիւնից առաւել ինչի՞ կարիք ունեն կեանքի վերջին տարիները ծերանոցում անցկացնող այս մարդիկ, նրանցից ոմանք էլ գուցէ կեանքի վերջին օրերն են հաշւում արդէն:

Մշակոյթի պալատի տնօրէն Անուշ Ղարաքէշիշեանը, ձեռնարկելով եւ կարեւորելով այս ծրագիրը, այնուամենայնիւ համոզուած է, որ նման տների գոյութիւնը յարիր չէ մեր ժողովրդին եւ ցանկանում է, որ դրանք վերանան Հայաստանից, որ զաւակները չլքեն ծնողներին, լինեն նրանց կողքին: Կեանքը սակայն իրենն է ասում, իրականութիւնից փախչել չես կարող, եւ մենք էլ այնպիսին ենք, ինչպէս մարդկային աշխարհն է՝ նոյն արատներով, թերութիւններով կամ առաւելութիւններով, եւ ոչինչ մեզ օտար կամ խորթ չէ: ...Օրեր առաջ էր. քաղաքի կենտրոնական փողոցներից մէկում տեղի կրպակատերերը իրենց համար «ուրախութիւն էին սարքել»՝ ծաղրուծանակի ենթարկելով մի խեղճ թշուառականի: Կիսացնորուած ցնցոտիաւորի՝ կեղտից սեւացած դէմքին սոված աչքերը պսպղում էին ոնց որ ածխի սեւ կտորներ: Պարի զուարթ մեղեդին բռնել էր փողոցը: Կինը պարում էր տենդագին, ողջ մարմնով գալարւում՝ թեւերը տարածած պտտւում. կողքինները ծափ էին զարկում, հռհռում... վաճառականները պարի դիմաց ուտելիք էին խոստացել նրան, ու սրանք բոլորը հայ մարդիկ էին...:

Բարեբախտաբար այսպիսի երեւոյթները սակաւ հանդիպող են եւ գթասրտութիւնն ու բարեսիրութիւնը դեռ չեն լքել մեզ: Միայն թէ թէեւ բարերարութիւնը, բարի գործը սիրում են ծածուկ մնալ, այնուամենայնիւ գալիս են ժամանակներ, երբ այս մասին բարձրաձայնելը դառնում է անհրաժեշտութիւն: Երբ համատարած անտարբերութիւնը, զգացմունքազրկումը սպառնում է հանրութեանը, գթասրտութիւնը կարիք է զգում յիշեցնելու իր մասին: Դա անհրաժեշտ է ոչ թէ եւ ոչ միայն կարիքաւորներին, դա բոլորիս է անհրաժեշտ:

**www.massisweekly.com**
**Updated every Friday**

## ԴԱՍ ՄԸ ՇՈՒՇԻԷՆ

*Շարունակուած էջ 6–էն*

*Ջարդերով, ազգային տարրերու մաքրագործումով երկու երկիրներուն մէջ, ազգաբնակչութեան փոխանակումներով:*

*Անդրկովկասի հակամարտութեան արմատները կը հասնին մինչեւ պատմութեան խորերը, երբ Միջին Ասիայէն թաթարներ սկսան կայք հաստատել տարածաշրջանին մէջ, հետզհետէ աճեցան ու բազմացան: Հետեւաբար, այս խճճուած իրադարձութեան մէջ եւ լարուածութեան պայմաններուն ծնունդ առաւ խաղի դաժան կանոն մը՝ զէնքով ու բիրտ ուժով գծել ու ամրապնդել սեփական հայրենիքի սահմանները:*

*1905–1906թ. հայ-թաթարական կռիւներէն ետք հայ յեղափոխական մը կը յուշագրէ. «Անգամ մը Նախիջեւանցի պարսիկ մոլլայի մը հետ կառքով կ՚անցնէինք հայկական գիւղի մը մէջէն: Գիւղի երեխաները, փայտէ հրացաններով զինուած, պատերազմ մը խաղային: Մոլլան, մօրուքը շփելով, մտահոգ դէմքով մը ինծի դարձաւ. «Աշխարհը կարծես ծուեր է»: «Այո», ըսի «Աշխարհը շտկուեր է»:*

*Անդրկովկասի մէջ եւ Արցախի շուրջ աշխարհ կը շտկուի երբ սերունդներ տէր կանգնելու համար իրենց իրաւունքներուն պինդ կը բռնեն այնքա՜ն փրկարար հրացանները, երբ կը խօսին այն լեզուով՝ որմէ միայն կրնայ հասկնալ թշնամին:*

*Շուշիի ազատագրութեան հիմնական դասը ա՛յս է, 1905–էն մնացած կտակ մը, որ հրաշալիօրէն կենսագործեն Շուշիի հերոսամարտին անուանի թէ անանուն հերոսներն ու նահատակները:*

*Փառք Շուշիի պանծալի յաղթանակի տարեդարձին:*

*Յարգանք այդ յաղթանակի կերտիչ սերունդներուն եւ զոհերուն:*

*Խմբագրական «ԱՐԱՐԱՏ»*

## «ԻՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՐՏՍ»

*Շարունակուած էջ 14–էն*

*որ իրենց վերապրիլ սորվեցուցած էր:*

*Աննա Պիւլ չապրեցաւ, որպէսզի տեսնէր 1988–ի Հայաստանի ահաւոր երկրաշարժի աղէտը:*

*Սակայն այն գերմանական պատսպարանը, որուն մէջ ապրեցաւ իր կեանքին մնացեալ տարիները եւ ուր նաեւ մահացաւ, փութաց օգնութեան հասնելու հայ աղէտեալներուն եւ տուժած ընտանիքներուն: Այդ օգնութեան մէջ էր նաեւ Աննա Հետուիկ Պիւլի վերարկուն, որպէսզի անտէր մնացած «հայ սրտեր»–ը տաքնան նոյնինքն Պիւլի «հայկական սրտով»:*

*Աննա Պիւլի սկսած առաքելութիւնը այսօր տակաւին կը շարունակուի Հալէպ քաղաքին մէջ՝ Հայ աւետարանական Քրիստոսի եկեղեցիին առաքելութեամբ եւ տարբեր մարզերու մէջ:*

*Իսկ Աննայի ծննդավայրին մէջ Արտեմը եւ Ռազմիկը կը շարունակեն երախտապարտ մնալ անոր նուիրական կեանքին ու յիշատակին:*

*Աննա Պիւլ գերմանական պատսպարանի իր սենեակին մէջ միշտ պահեց Ս. Գրային համարը հայերէնով եւ պատին վրայ կախուած. «Մինչեւ մահ հաւատարիմ եղիր»:*

*Աննա Պիւլ հաւատարիմ մնաց «իր հայկական սիրտին»: Որովհետեւ կրցաւ տեսնել նոյնինքն այդ սրտին վերապրումը՝ Ցեղասպանութեան արհաւիրքէն ետք:*

*Եւ հայուն վերապրումի գրաւականը հաւատալն է այս «հայկական սրտին»: Բայց անպայմանօրէն՝ անոր հայատրոփ շարունակականութեան:*


## JOB OPPORTUNITY

**Ararat Home of Los Angeles caters primarily to the needs of the Armenian community by providing Assisted Living and Skilled/Convalescent Nursing Services.**

**We are looking for an enthusiastic individual to join our management team as the Human Resources Coordinator. The candidate must have comprehensive HR knowledge with excellent communication skills. This is a hands-on position for an individual who will develop, implement and execute HR processes and strategies to recruit staff, administer benefits and compensation packages, and manage employee relations and retention. The candidate will ensure the organization's compliance with federal, state and local rules and regulations. The candidate must have, at a minimum, a Bachelor's degree in Human Resources or a related field from an accredited U.S. university and 5 years of progressive leadership experience in Human Resources. Additionally, the candidate must have up-to-date knowledge of workers' compensation, employee safety standards and FMLA. A bilingual (Armenian/English) candidate is strongly preferred. Competitive salary and benefits are offered.**

**Interested candidates should submit their resumes to Derik Ghookasian at info@ararathome.org.**

HayastanInfo.net


## ԹՈՒՐՔԻՈՅ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՅՑԸ ԼԻԲԱՆԱՆ

*Շարունակուած էջ 8–էն*

*ցութեան պատմութեան, ան ըսաւ. «Ծանօթանալով արխիւներուն հիացայ, նոյնիսկ պահ մը զգացուած էի, դուք այդ երկրի (Թուրքիոյ) առաջատարներն էք: Հայ եւ յոյն ընկերվարականներն էին, որ համամարդկային գաղափարները առաջինը մտցուցին Օսմանեան Կայսրութիւն»:*

*Ներկաները, նոյն մտահոգութիւններուն շուրջ ուղղեցին հարցումներ օրուան բանախօսին:*

*Հանդիպումը փակեց ընկ. Տօքթ. Եղիկ Ճէրէճեան, նշելով որ հինգ տարի առաջ «Թաքսիմ» հրապարակին վրայ սկսած Ապրիլ 24–ի նշումը, որ եղաւ հինգ թուրք մտաւորականներով, այս տարի 5000–ի հասած է: Ան, անոր մէջ գտաւ Ցեղասպանութեան ճանաչման գործնական ազդակներէն մին:*

*Ընկ. Եղիկ իր խօսքը փակեց ըսելով. «Մեզի երկարած ձեռքը մենք բռնեցինք եւ ամուր սեղմեցինք»:*

## ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՔԵՍԱՊԻ, ՀԱՄՇԷՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ «ՔՐՏԱՑԱԾ» ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 8–էն*

*թեան ենթարկուելու, եւ ի վերջոյ ստանայ իր արդար հատուցումը, այն միլիոնաւոր զոհերուն եւ նահատակներուն համար, որոնք ինկան հայ գողգոթայի ճամբուն վրայ:*

*Հայ ժողովուրդի որդի, Միքայէլ Ասլանի Տերսիմի «Փեթակ» հինաւուրց երգերու, երաժշտութեան ունկնդրութենէ ետք, իր դասախօսութիւնը փոխանցելու համար բեմ հրաւիրուեցաւ միջազգային լրագրող, պատմաբան Համօ Մոսկոֆեան:*

*Սահիկներու ընկերակցութեամբ, աւելի քան ժամ մը ամբողջ ներկայացուեցան Քեսապի իրադարձութիւնները, Արեւմտեան Հայաստանի եւ սփիւռքի «քրտացած» եւ «թրքացած» մեր բիւրաւոր եղբայրներէն ու քոյրերէն՝ Արեւմտեան Հայաստանի, Ռուսիոյ, Ղրղզստանի համշէնահայերէն՝ Վարթոյի ու Մուշի, Վիսպատըն ու Ռուսահայ մի բռնի իսլամացուած մեր ժողովուրդի զաւակները՝ որոնք այսօր զանգուածային կերպով կը վերադառնան հարազատ ժողովուրդին գիրկը: «Մենք չենք եկած միայն լաց ու կոծի, ողբի եւ արցունքներու պատմութիւններ փոխանցելու ձեզի, այլ հայ ժողովուրդի իսկական թիւի բազմապատկումին, ցեղասպան Թուրքիոյ խախուտ ներքին իրավիճակին մասին: Ցեղասպանութիւնը կոծկելու Թուրք յետադիմութեան եւ ֆաշիստ վարչակարգի ձախողութեան իբր արդիւնք այսօր վարչապետ Էրտողան խորամանկ զիջումներու կ՚երթայ, հայանուն պատուիրակներ ուղարկելով սփիւռքի գաղթօճախները, իր իշխանութեան գովքը հիւսելու եւ նոյնիսկ... զինք Նոպէլեան Մրցանակի արժանացնելու՝ Քեսապի աղէտին, հազարաւոր յառաջդիմականներ Թուրքիոյ բանտերը նետել տալո՞ւն թէ Սուրիոյ քրիստոնեաները մորթել տալուն համար...», յայտնեց բանախօսը: Մօտալուտ արդարութեան հասնելու վճռակամութեամբ, լրագրող Համօ Մոսկոֆեան շնորհակալութիւն յայտնեց երեկոյի կազմակերպիչ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան եւ ներկաներուն:*

*Մինչ այդ կեդրոնի հիւրասենեակին ու դահլիճին մէջ տեղի կ՚ունենար «հայկական» հիւրասիրութիւն, ապա կեդրոնական գրասենեակին մէջ տեղի ունեցաւ Հնչակեան դրօշներու տուչութիւն, որոնք նուէր ուղարկուած էին Լիբանանի շրջանի վարիչ մարմնին կողմէ: Այս պատմական արարողութեան մասնակցեցան Ուրուկուէյի Ս.Դ.Հ.Կ. ատենապետ, հուչակաւոր վիրաբոյժ, Փրոֆ. Տոքթ. Մարսէլ Քէօշկերեան, ատենադպիր ընկ. Տիեկօ Գարամանուկեան, կեդրոնական խորհուրդի անդամները եւ այս բացառիկ նուէրը փոխանցող լիբանանահայ հիւրերը:*

*Մինչեւ ուշ երեկոյ, համերաշխութեան, միաբանութեան, մեր սուրբ նահատակներուն յիշատակը արժանաբար ոգեկոչելու վճռակամութեամբ լի, Մոնթէվիտէոյի հայկական գաղթօճախի ընտրանին անմոռանալի ժամեր ունեցաւ յետագայ օրերուն շարունակելու Ապրիլեան սգատօնի եւ պահանջատիրութեան միջոցառումները՝ «Արմենիա» հրապարակէն, Ուրուկուէյի խորհրդարանէն եւ ... Մոնթէվիտէոյի գլխաւոր պողոտային վրայ քայլարշաւով, ջահերու լոյսով:*

*Ուրուկուէյին ակամայ հրաժեշտ տալէ առաջ «Արաքս» ռատիոյի տնօրէն ընկ. Տիեկօ Գարամանուկեան եւ ընկերուհի Մարիա Գարամանուկեան, հարցազրոյց մը կազմակերպեցին լրագրող Համօ Մոսկոֆեանին հետ, որ պատասխանեց նաեւ Ուրուկուէյէն եւ Արժանթինէն կապուող ունկնդիրներու հեռախօսազանգերուն...: Մինչ այդ «Ռատիոն» հիւրանոցին մէջ, «Արաքս» ռատիոն հարցազրոյց մըն ալ ունեցած էր Թուրք նշանաւոր քաղաքական գործիչ, մեծ հայասէր Ռագըպ Զարաքօլուի հետ, որ կ՚այցելէր Արժանթին եւ Ուրուկուէյ:*

*Գ.Ա.*



## ՄԱՀԱԶԴ



***ԵՐՈՒԱՆԴ ԱԿԻՇԵԱՆ***
*(1928-2014)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ ազգականին՝ **ԵՐՈՒԱՆԴ ԱԿԻՇԵԱՆԻ** մահը, որ պատահեցաւ Մայիս 7-ին, յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Տան կարգը տեղի ունեցաւ Մայիս 13-ին, երեկոյեան ժամը 7-9, Rose Family Funeral Home-ի մէջ (4444 Cochran St., Simi Valley, CA 93063), իսկ յուղարկաւորութիւնը՝ Մայիս 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, Oakwood Memorial Park (22601 Lassen St, Chatsworth) գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներն են՝*

*Այրի Տիկ. Թանիա Ակիշեան եւ իր զաւակները՝ Տէր եւ Տիկ. Արմոնտ եւ Քիմ Միրզախանեան, Տէր եւ Տիկ. Ճոն եւ Ատրիէն Թրէյնըր եւ զաւակունք, Տէր եւ Տիկ. Մայքըլ եւ Միշէլ Նիշքեան*

*Դուստրը՝ Շողիկ Ակիշեան եւ զաւակը՝ Տէր եւ Տիկ. Սերժ եւ Ճասմին Գալֆայեան*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Նորա Թաթարեան եւ զաւակը՝ Մարգ Թաթարեան*

*Որդին՝ Տէր եւ Տիկ. Արա եւ Ճիւլիա Ակիշեան եւ դուստրը՝ Ալեքսանտրա Ակիշեան*

*Ինչպէս նաեւ համայն Ակիշեան, Երանոսեան, Սաղրեան, Պապեան, Պոյաճեան, Թաթարեան, Թոմասեան եւ Փեթերեան ընտանիքները:*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*Լոս Անճելոսի Կիլիկեան Բարեգործական Միութեան երկարամեայ ատենապետ՝ **ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ** անակնկալ մահուան տխուր առիթով, Հալէպի Կիլիկեան շրջանակի խնամակալութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն, պարագաներուն, գործընկերներուն եւ Կիլիկեան Բարեգործական Միութեան բոլոր անդամ եւ անդամուհիներուն:*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

***ԵՐՈՒԱՆԴ ԱԿԻՇԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ վաստակաշատ կրթական մշակի եւ հասարակական բեղուն գործիչի ընտանեկան պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Արա Ակիշեանին, ինչպէս նաեւ ՌԱԿ Շրջանային Վարչութեան, «Նոր Օր»ի խմբագրութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի հոգաբարձութեան:*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

***ԵՐՈՒԱՆԴ ԱԿԻՇԵԱՆԻ** մահուան տխուր առիթով «Շիրակաշէն»ի խմբակցութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Թալիա Ակիշեանին, ընտանեկան համայն պարագաներուն եւ մասնաւորաբար իրաւաբան Տէր եւ Տիկ. Արա Ակիշեանին:*

## ՄԱՀԱԶԴ



***ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ***
*(Ծնեալ Հալէպ, 12 Յունուար 1949)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր ամուսնոյն, հօր, եղբօր եւ հարազատին **ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ** անակնկալ մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի, 7 Մայիս 7, 2014ին սրտի կաթուածով:*

*Յուղարկաւորութեան Տան կարգը կատարուեցաւ Մայիս 14, 2014, երեկոյեան ժամը 5-8ը Rose Hills Memorial Park գերեզմանատան եկեղեցւոյ մէջ, (3888 Workman Mill Road, Whittier CA 90601), իսկ յուղարկաւորութեան եկեղեցւոյ եւ գերեզմանի կարգերը տեղի ունեցան Հինգշաբթի, 15 Մայիսին, ժամը 1:00ին նոյն գերեզմանատան մէջ: Ապա հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Restaurant-ի մէջ, (3887 Sierra Madre Pasadena, CA 91107):*

*Սգակիրներն են՝*
*Տիկինը Լինտա Սարգիսեան*
*Զաւակը՝ Ճէրըլտ Սարգիսեան*
*Եղբայրը Գրիգոր Սարգիսեան եւ զաւակունք*
*Քոյրը Թագուհի Աչճեան եւ զաւակունք (Հալէպ)*
*Քոյրը՝ Սոնա Տէիրմէնճեան եւ զաւակունք*
*Մօրեղբայրը՝ Մանուէլ Տարագճեան եւ զաւակունք*
*Մօրաքոյրը Անահիտ Պասմաճեան եւ զաւակունք*

*Եւ համայն Սարգիսեան, Աչճեան, Տէիրմէնճեան, Տարագճեան, Պասմաճեան, Քիլէճեան, Թաւուքճեան, Ճանսըզեան, Սուքիասեան, Կիլիկեան Վարչութիւն, Solis Wiekland Liebreich Families:*

*Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Կիլիկեան Բարեգործական Միութեան:*

## ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*Ծնաւ անդրանիկ հատորը »Սէր ու Կրակ«ը »վերյիշեցնելու սէրը հայոց սրտին ու վառելու կրակը իր ըմբոստ պայքարին«, որուն ընդմէջէն յստակօրէն կը զգանք բանաստեղծի հաւատարմութիւնն ու կապուածութիւնը հայ մշակոյթին, հաւատալով որ Մշակոյթն է հայ ժողովուրդի գոյատեւման երաշխիքը:*

*Սէր ու Կրակ արտայայտող բանաստեղծութիւնները չմնացին ծուարած գիրքի էջերուն մէջ, այլ անոնք տարածուեցան դարձան սեփականութիւնը հայ մարդուն՝ երգելով, արտասանելով, կարդալով. յատկապէս հայ աշակերտի շրթներուն՝ դարձան տօնակատարութիւններու ներբող, ոգեկոչումներու՝ փառաբանութիւն եւ խրախճանքներու՝ խանդավառութիւն, մինչ այդ կայլակը դարձնելով սեփականութիւնը ոչ միայն Քալիֆորնիոյ հայ գաղութին՝ այլ անոր սահմաններէն անցնելով դէպի սփիւռքի հայկական գաղութները:*

*Կայլակ, ալ իրաւունք չունէր լռելու, պէտք է խօսէր, պէտք է գրէր եւ երգէր. եւ ան ոչ միայն գրեց, այլ պոռթկաց եւ բողոքեց ի տես քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան կրկնօրինակին, քսանմէկերորդ դարու սեմին պատահող, պոռթկաց ի տես Հալէպի անցուդարձերուն, քրիստոնիաներու եւ հայերու անարգօրէն զոհուելուն, սպանդին, եկեղեցիներու պղծումին եւ քրիստոնիայ կրօնաւորներու «ալլահ աքպար»ի անունով մորթազերծման եւ դարձեալ երկունքի ցաւերով ծնունդ տուաւ նոր ապրումներուն, աշխարհի երեսն ի վար շպրտելու մարդկային անարդարութիւնը. եւ ծնաւ՝ «Բողոքում Եմ» բանաստեղծութիւնը.*

«Մինչեւ ե՞րբ պիտի թողնես անզուսպ
Սիրտը սաւառնի կրկին ու կրկին,
Մինչեւ ե՞րբ զաւակները քո
Մորթուեն «ալլահ աքպար» կանչելով...»

*Սակայն պէտք էր բողոքի ձայնը լսելի դարձնել աշխարհին եւ լաւագոյն հասանելի ձայնը՝ հայ մարդուն հոգիին մօտիկ ասմունքի վարպետ՝ Նունէ Աւետիսեանինն էր. ան իր համակ էութեամբ կարդաց ու մեկնաբանեց «Բողոքում Եմ»-ը յատուկ պատրաստուած տեսաերիզի մը ընդմէջէն, որ ճեղքեց սահմանները եւ այս անգամ հասաւ մինչեւ հայրենիք: Կայլակ այս անգամ նուաճած էր նաեւ հայրենիքի մէջ ապրող հայ մարդու հոգին ու միտքը:*

*Կայլակ շարունակեց գրել իր երգերը՝ արեւելահայերէնով եւ արեւմտահայերէնով, գրաւելով հայրենի արուեստագէտներուն ուշադրութիւնը, որոնց առաջինը եղաւ Հայրենի ժողովրդական երգերու նորագոյն մատղաշ ձայներէն Եւա Եգանեանը, որ իր ձայնի գեղեցիկ ելեւէջներով մեկնաբանեց Կայլակի ստեղծագործութիւն՝ «Երկիր Իմ Սուրբ»ը, ան շուտով սեփականութիւնը կը դառնայ ժողովուրդին գեղեցիկ տեսաերիզով մը, անոր պիտի յաջորդէ Ինկա եւ Անուշ քոյրերու նոր երգը, եւ Քեսապի հայաթափումին ի պատասխան «Ճիչ Քեսապի»-նը որ շուտով ժողովուրդը կ'ունկնդրէ Գառնիկ Սարգիսեանի մեկնաբանութեամբ:*

«Կը լսուին ողբի ձայներ գիշէս,
Կը բխի արիւն, այրած էջերէս....
Երբ երգեմ յանկարծ ճիչը Քեսապի՝
Կը փակուին ամպոտ փեղկերն Դըրախտին:»

*Կայլակի ապագայ ծրագիրն է հրապարակել նոր հատոր մը՝ նուիրուած հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, ան պիտի ըլլայ պատգամ մը ուղղուած նոր սերունդին, ոչ յուշ այլ երազ, ոչ պատմական պատահարներու կրկնութիւնը այլ նոր սերունդի կեցուածքն ու գալիք դարու ծրագիրները:*

*Կայլակի նպատակն է իրեն տրուած Աստուածատուր շնորհքը մարդկութեան բաշխել իր բանաստեղծութիւններու միջոցաւ եւ ուղղել ժողովուրդը դէպի ՍԷՐ, սէր Աստուծոյ, սէր մարդկութեան, սէր հայրենիքի:*

*Ներշնչել ժողովուրդին՝ թէ սէրն է որ պիտի նուաճէ ամէն չարիք:*

*Ներշնչել նոր սերունդին՝ թէ մշակոյթն է որ մնայուն է եւ երաշխիքը ժողովուրդի գոյատեւման:*

*Ներշնչել հայ աշակերտին՝ աճեցնելու համար հայ լեզուի հանդէպ սէր պաշտամունք երգով ու ասմունքով:*

*Ի խնդութիւն Կայլակի, այսօր արդէն իր քայլերուն սկսած է հետեւիլ իր դուստրը Նայիրին, Կայլակի երազն է, ինչպէս Նայիրին ներշնչուեցաւ իրմով, փոխանցուի այդ ալիքը, գրգիռը բոլոր հայ աշակերտներուն, մօտէն ծանօթանան, կարդան բանաստեղծութիւններ, առնչուին հայ բանաստեղծներու հետ, բաժնեն անոնց ապրումները, որոնք հայ մարդու ապրումներ են, հայ մարդու տագնապներն ու խռովքներն են եւ դառնան Մեսրոպ Մաշտոցի վաղուան արժանաւոր սպասարկուները:*

*Մենք Յաջողութիւն կը մաղթենք Կայլակին, թող որ հայոց աշխարհը մնայուն ներշնչման աղբիւր դառնայ իրեն, հայոց հրաշափայլ բառերը զուլալ աղբիւրներու նման հոսին իր գրիչէն շարունակելով բեղմնաւորել Աստուծոյ իրեն տուած շնորհքը, երազները իրականանան, կայլակները բազմանան դառնան ծովեր ոռոգելով հայ գրականութեան անդաստանը:*


Ամառնային
Փառատօն
Armenian Summer
FESTIVAL
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
Sunday June 8, 2014
Barnsdall Art Park
HOLLYWOOD
4800 Hollywood Blvd Los Angeles, CA 90027
Starting at 11:00 am
Live Music
Dancing
Art work Exhibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
Sponsors
MITCH O'FARRELL
COUNCILMEMBER MITCH O'FARRELL
Glendale West Pharmacy and Medical Supply
amga
ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC
Մասիս
www.massispost.com
SARKIS
Vrej Pastry
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
for more info please call
vNor Serount Cultural Association
(818) 391-7938